

Ռազմական գործը արվեստ է, ռազմիկ լինելը՝ պատիվ

Բոլոր ժամանակներում խաղաղության երաշխավորը Հայոց բանակն է

«Ազգերը, ինչպես եւ անհատները, յաճախ մեծ եւ յաղթական լինելու կարիքը կը գգան: Նրանք կ'ուզեն ունենալ գիտակցութիւնը իրենց տիրական կամքի, որը եւ ձեռք կը բերեն յաղթական պայքարի մէջ: Այո, սերը դէպի յաղթանակը եղել է եւ կը մնայ բացարձակ պայմանը ազգերի եւ անհատների ստեղծագործ կենսիք»:

Գարեգին ՆՇԵՅ, «Յիշի՛ր պատերազմը»



Հայաստանի Հանրապետության օրացույցում հունվարի 28-ը նշվում է որպես Հայոց բանակի կազմավորման օր: Արցախյան ազատամարտի կարեւորագույն նվաճումներից եւ ձեռքբերումներից էր ոչ միայն հայրենիքի մի հատվածի ազատագրումը, այլև Հայոց կանոնավոր բանակի վերածնունդը: Կյանքի եւ մահվան, պատերազմի բռնկում թրծված հայ մարտիկն իր հզոր նախնիների ոգու կրողն էր դարձել՝ ապահովելով հաղթանակի անխուսափելիությունը:

Ուժի, հերոսության, անկոտրում կամքի մարմնացումն ու նորաստեղծ պետության անվտանգության երաշխավորը դարձավ Հայոց բանակը: Անհնար է խոսել հայոց բանակի մասին եւ չանդրադառնալ նրա՝ դարերի միջով ձգվող ընթացքին: Առաջին հայացքից հպարտություն առաջացնող այս տոնը ինչ-որ չափով «նսեմացնում» է հայկական բանակի, հայ ռազմիկ անցած ճանապարհը, բանի որ հայոց զենքի պատմությունը միահյուսված է հայ ազգի հազարամյա պատմության ընթացքին: Այն նույնքան հին է, որքան հայը:

Պատմության ընթացքում ազգային զինված ուժերն ունեցել են կարեւորագույն եւ առանցքային դերակատարում. հայ զինվորականությունն է ապահովել ինչպես թագավորական, իշխանական տների անվտանգ կառավարումն ու գոյությունը, այլև բնակչության անվտանգությունն օտար նվաճողներից ու երկրի սահմանների անձեռնմխելիությունը:

Հայ զինվորականի կերպարն օրինակելի է եղել, քաջությունը, անձնվիրությունը, հանուն հայրենիքի կյանքը զոհաբերելու պատրաստակամությունը կենտրոնական տեղ են զբաղեցրել եւ բնորոշել հայ ռազմիկին: Ի վերջո, այն ժամանակաշրջաններում, երբ ռազմարվեստի տիրապետելը համարվել է տղամարդու եռության մի մասը, նրան բնութագրող բաղադրիչը, մենք ունեցել ենք ավելի ապահով հայրենիք: Հայկական ազնվական տներում որդիները ստացել են երկարամյա ռազմական ուսուցում եւ դաստիարակություն: Ռազմական գործին տիրապետելը համարվել է պատիվ, այլ ոչ թե պատիժ: Ռազմական արվեստի եւ զինվորի նկատմամբ հատուկ վերաբերմունքն ընդգծվում է նաեւ նրանով, որ հնագույն ժամանակներում հայերս ունեցել ենք ռազմի աստված: Հայկական դիցարանի ռազմի, քաջության եւ հաղթանակի աստված Վահագնին հեթանոս հայրերն այնքան են սիրել, որ անգամ մարդեղենացրել են: Պատմահայր Մովսես Խորենացին Վահագնին համարել է Տիգրան Երվանդյանի որդին: Հայոց արքաներն ու զորավարները մարտի գնալուց առաջ Վահագնից հայցել են խիզախություն եւ ակնկալել նրա հովանավորությունը:

Հայերի բացառիկ մարտունակությունը, հայ ռազմիկի առաքինությունները նկատելի են արձանագրել են օտարները: Հայերն արիափրոտ ռազմիկների հարձակ են ունեցել դեռեւս հնագույն ժամանակներից: Հռոմեական, ապա նաեւ

բյուզանդական ժամանակներում հայ զինվորականը մեծ հարգանք էր վայելում՝ նշանակալի տեղ զբաղեցնելով կայսրությունների բանակների եւ ռազմաքաղաքական վերնախավերում: Ակադեմիկոս, բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանը նշում է, որ Բյուզանդիայում «հայ» եւ «քաջ» բառերն ընկալվում էին իբրեւ հոմանիշներ: «Հայկական ռազմարվեստը իհն աշխարհի շատ ժողովուրդների եւ երկրների ռազմական հզորության մակարդակը գնահատելու որոշակի փորձաքար է», – վկայել է հույն պատմիչ Ստրաբոնը: Իսկ բյուզանդագետ Ռոմիլի Ջենկինսի խոսքով՝ «Բյուզանդիայի ռազմական հզորությունը, ռազմական կազմակերպվածությունը եւ ռազմական հանճարը, որոնց վրա էր խարսխված փայլուն վերնաշենքը, ամբողջովին հայկական էր»: Թուրք հրամանատար Վեհիբ փաշան 1918-ի մայիսյան հերոսամարտերից հետո խոստովանել է. «Հայերը ցույց տվեցին, որ ընդունակ են լինել աշխարհի լավագույն զինվորները»: Թուրք հրամանատարի գնահատականը մեկ անգամ եւս ապացուցում է, որ ապրելու եւ հաղթելու վճռականությունը կարող է անել աներեւակայելի՝ հաղթանակն ապահովել թշնամու նկատմամբ՝ կոտրելով թվաքանակի մեծության հետ կապված կարծրատիպը եւ ապացուցելով ոգու եւ կամքի գերակայությունը: Ավելի քան հար-

Հայ զինվոր-ռազմիկի վարքականոնը

յուր տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունը խորհրդանշական է եւ ապացուցում է Նժդեհի խոսքերի ճշմարտությունը, որ «ամենն գարիուրելին պարտությունը չէ, այլ պարտուողականությունը, որով բռնուած ժողովուրդը լրացում է, կատարեալ դարձում իր թշնամու յաղթանակը»:

Անցյալի փառահեղ հաղթանակները ոգեշնչող են, ցավալի պարտությունները՝ ուսանելի: Դրանց վրա ազդեցություն ունենալ չենք կարող, սակայն այդ դասերն ու ստացած փորձառությունը հնարավորություն կարող են ընձեռել՝ կերտելու արժանապատիվ ապագա, որտեղ մենք ծնկած չենք լինի: Իսկ արժանապատիվ ապագա ստեղծելու համար անհրաժեշտ է առաջին հերթին պատասխանել այն հարցին՝ ինչու է ստանձնել ապագա սերունդների առջեւ: Հաճախ նման մտքերը գնահատվում են պաթոսային, զգացմունքային, երբ անհատն ազգաճանաչ չէ եւ չի զգում այն ուժը, որին տիրապետել են իր նախնիները եւ ինքը՝ որպէս կրակաժամակ: Այսօր հայկական զինված ուժերի մարտական ոգու եւ որակի վերականգնումն ու մրջտական պատրաստվածության միճակում գտնվելը պահանջված են եւ առաջնային: Միայն թե մեր ժամանակներում հայ զինվորի, հայոց բանակի մարտունակության բարձրացման համար կարելու է ոչ միայն բարոյահոգեբանական պատրաստվածությունը, այլեւ գիտական մտքի «մարտիկների» աշխատանքը, քանի որ առանց այս երկուսի սերտ համագործակցության հնարավոր չէ հասնել հաղթանակների:

Այսօր մեր հայրենիքում ապրելու իրավունքը պաշտպանելու համար այլեւս նոր խնդիր ունենք լուծելու: Ցավալիորեն կորցրել ենք միասնականությունը, հանում ենք սպանակի բոլոր տարածայնություններն ու հակասությունները «մոռանալու» կարողությունը, բայց եթե անգամ դա էլ լիներ, մեզ պակասում է նորագույն զինատեսակներին ոչ միայն տիրապետելը, այլեւ գերազանցելը: Մնալ մեկ հարթության մեջ մեզ ոչնչացնել ձգտող թշնամու հետ, կնշանակի թե՛ ոչ պարտություն, ապա առնվազն մաշեցնող, հյուժող պատերազմ: Հայկական կողմից զոհերի բացառումը հնարավոր է միայն թշնամուն գերազանցելու դեպքում, թե՛ հոգեբանորեն, թե՛ մարտարվեստի, թե՛ ռազմական հնարավորությունների մակարդակում: Այս պարագայում հետին պլան կգնա պատերազմելու անհրաժեշտությունը, քանզի ուժեղի հետ չեն պատերազմում, այլ հարմարվում են, ձգտում համագործակցել, անգամ՝ դաշնակցել:



Ե՞րբ է Հայոց երկրում ստեղծվել հայկական բանակ, այս հարցին կարելի է պատասխանել՝ հենվելով քերթողահայր Խորենացու մատյանի փաստերի վրա: Հայկ Նահապետն արդեն ուներ բանակ, որ կարողացավ հաղթել Բելին: Իհարկե, շատերը կասեն՝ դա առասպել է: Ցանկացած առասպել իր մեջ կրում է իրականություն, ազգային էպոսի հիմքում նույն ազգի պատմությունն է:

Նորանկախ Հայաստանի բանակի հիմքը դրվեց դեռեւս 1988-89 թթ., երբ սկսվեցին ձեւավորվել տարբեր ռազմական ջոկատներ, բանակներ, եւ որոնց միավորումով էլ 1992թ. հունվարի 28-ին կազմավորվեց պետական բանակը: Հայաստանի առաջին հանրապետության օրոք նույնպէս ունեինք բանակ, որը, չնայած բազում խնդիրներին, կարողացավ ապահովել մեր ժողովրդի գոյապայքարը: Հայ զինվորի, ռազմիկի՝ երկրի պաշտպանի գաղափարական արժեքներն ու հայոց հազարամյա մշակույթի հետ ունեցած սերտ հարաբերություններն է անդրադառնալու «Հայ ռազմիկ» («hayrazmik.com») նորաբաց կայքը, որի շնորհանդեսը կայացավ հունվարի 28-ին Երեւանում՝ «Թեքեյան կենտրոնում»: Ներկա էին կայքի հիմնադրման աշակիցներ, արվեստասերներ, պատմաբաններ, ուսանողներ: Կայքի ծրագրի ղեկավար, քաղաքական գիտությունների դոկտոր, պատմաբան Արմեն Այվազյանը ողջունեց ներկաներին եւ անդրադարձավ կայք-հարթակի ստեղծման անհրաժեշտությանը, խնդիրներին, Եւրոյանը: Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին Արցախյան զոյամարտի եւ հետագա տարիների ընթացքում նահատակված ազատամարտիկների ու զինվորների հիշատակը:

«Հայ ռազմիկ» կայքի նպատակն այն է, որ մեր ժողովուրդը ոչ միայն խորությամբ ծանոթանա հազարամյակներ ձգվող իր հարուստ պատմությանը, գրականությանը, վարքականոնին, էպոսին եւ երաժշտությանը, այլեւ կարողանա այդ գիտելիքներն այսօր կիրառել բանակաշինության, պետականաշինության մեջ, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Նշելով այս մասին՝ բանախոսը հավելեց. «Մեր պատմության ընթացքում ժողովրդի ստեղծած մեծ, հարուստ մշակույթի չնչին մասին է այսօր ծանոթ հայ մարդը: Իսկ պատճառները ծառ են, սակայն հիմնականը՝ մեր ժողովրդի՝ օտար տիրապետության տակ գտնվելն է եղել: Որքան էլ հաջողվել է Հայ եկեղեցու, գրականության միջոցով ավանդույթները փոխանցել սերունդներին, այնուամենայնիվ, պետությունն իր կառուցների, լծակների միջոցով չի կարգավորել ու դասակարգել ահռելի գաղափարաբարոյական կյուրք: Խնդիրն առկա է նաեւ այսօր: Մեր սերունդ-

ները լավ ծանոթ չեն, թե ինչ ունենք, ինչ է մեր մեջ արդեն իսկ առկա, եւ ինչպէս դա կարելի է կիրառել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում՝ սկսած լեզվական քաղաքականությունից, վերջացրած՝ նույնիսկ տերմինաբանական հարցերով: Կայքը հատկապէս ներկայացնելու է արժեհամակարգային խնդիրները»:

Այնուհետեւ Էկրանին ցույց տվեց կայքի ենթաբաժինները՝ «Վարքականոն», «Պատմավեպ», «Պոեզիա», «Գեղանկարներ», «Հուշարձաններ», «Էպոս», «Երաժշտություն», «Ռազմական գրականություն», «Գեղանկարչություն», «Բանահյուսություն» եւ այլն: Հատուկ բաժին է նվիրված Նժդեհին: Հատկապէս կարելու է հայ զինվոր-ռազմիկի վարքականոնը: Հայ ժողովրդի մի քանի հազարամյա պատմության ընթացքում հայ զինվորն իր հերոսությամբ, նվիրվածությամբ, մարտիրոսությամբ, նահատակությամբ, մաքառումներով դարձել է նաեւ գեղարվեստական տարբեր քնագավառների հերոս: Մեր պատմիկները, սկսած Փավստոս Բյուզանդից մինչեւ ուշ միջնադար, իրենց մատյաններում անդրադարձել են հայ զորականի կերպարին: Հատկապէս հայ մշակույթի Ոսկեդարի պատմիչ-ներկայացուցիչներ Բյուզանդն ու Եղիշեն, Խորենացին ու Փարպեցին առանձնակի են ներկայացրել ժամանակաշրջանի հայ զորականի կերպարը: Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի հերոսները, որոնք հիմնականում նույն Եղիշեի ու Փարպեցու, Խորենացու հիշատակածներն են, պարզապէս իսկական զինվոր-ասպետի կերպարներ են: Հայ գրականության շատ ներկայացուցիչներ՝ Խ. Աբովյան, Բաֆֆի, Ռափայել Պատկանյան, Լեո, Ծերենց, Ալիշան, Ստ. Չորյան, Հր. Քոչար, Մ. Գալշոյան, Ս. Խանկապույան եւ այլք, նույնպէս իրենց ստեղծագործություններում կարելու տեղ են տվել զինվորի վարքագծին: Առանձնակի տեղ ունի հայ զորականը նաեւ պոեզիայում՝ Վարուժան, Տերյան, Չարենց, Իսահակյան... Հայ գրականի կերպարին անդրադարձել են շատ երաժիշտ-երգահաններ, ինչպէս հայեր, այնպէս էլ՝ օտարազգիներ:

Առավել ցայտուն է երեւում հայ զինվոր-ռազմիկի կերպարը «Սասնա ծռեք» կամ «Սասունցի Դավիթ» էպոսում: Այստեղ կարելու է տեսնել երդումն ու անեծքը: Սանասարն ու Բաղդասարն ստիպված հետ են գնում Մար, քանի որ երդվել էին հետ վերադառնալ: Մեծ Միերն ու կիկը մահանում են երդմնազանց լինելու պատճառով: Դավիթը, լինելով հայ ժողովրդի, հայ զորականի հավաքական կերպար, որպէս զորական՝ մարտի է գնում թշնամուն նախապէս պատրաստելով իրեն դիմադրելու: Նա Մարա Մելիքին հարվածում է միայն երրորդ անգամ՝ առաջին երկուսը բաշխելով Իսմիլ Խաթունին, ով իրեն ինչ-որ ժամանակ մայրություն էր արել, եւ Մելիքի քրոջը: Նա ասպետորեն է վարվում նաեւ արաբ ծերունու հետ եւ չի սպանում նրան ու զինակիցներին: Նույն Դավիթը նույնպէս մահանում է, քանի որ խախտել էր երդումը եւ չէր ամուսնացել Չմկիկ Սուլթանի հետ: Թշնամու կանանց, երեխաների, տարեցների հանդէպ ասպետորեն էր վարվում նաեւ Նժդեհը:

Ամենօրյա մտահոգություն

Մեր քարկոծվող, մեր անպաշտպան հայոց լեզուն

«Անթաթ ինձ կանոն են, հա՞, թե հայերեն ճիշտ չեմ խոսում... Ամեն մեկը, հա՞, թող իր գործով զբաղվի: Իմ խնդիրն է, հա՞, ոնց կխոսամ... Թող չլսեն, ես կոմպլեքսավորված անձնավորություն չեմ...»։ Կլոմայեքսավորված, լախրչության աստիճան համարձակ սույն անձնավորությունը, ում «անթաթ» / հասկացիր անընդհատ / «կանոն են» հայոց լեզուն ու «ընդհանրապես» բացահայտ արհամարհելու պատճառով, ով անթաթ աչքերը հաղորդակարին պարզած անկաշկանդ ճամարտակունով քարկոծում էր քննադատողներին եւ մեր ոսկեղենիկ Դայոց լեզուն, հավատացեք, ոչ թե շուկայում վարունգ վաճառող սովորական մի առեւտրական է, այլ հանրահայտ «աստղաբույլի» երգչուհի, շատերի կողմից ընդունված ու սիրված դերասանուհի: Հաղորդավարը վերջին ճիգն արեց, փորձեց համոզել, որ մանավանդ եթերից չի կարելի, համեմայն դեպք, բարեկիրք չէ անփույթ, անկանոն խոսելը, դրանով մայրենի լեզուն եւ հեռուստադիտողներին արհամարհելը, որպես պատասխան չարտվեցին նույնամանակ բառակույտեր. «Ես հայկական մեթոդիստետով եմ շարժվում, ես ունեմ իմ ճիշտը, հա՞...»:

Նրա խոսքից հասկացվում է, որ հայկական մեթոդիստետով շարժվողն, անպայման, պիտի խոսի, ինչպես ուզում է, չափ ու կշիռ չըլին արտահայտություններում, պիտի խեղաթուրի, արատավորի իր եւ իր ժողովրդի լեզուն, որոնց համար ես, ինչպես երգելուց հետո, պարտավոր եմ ծափահարել ու մի պաչ դրոշմել համառ ճակատին: Իսկ օտարախոսն, շինծու «հա»-ե՞րը, որ բուն են դրել ոչ միայն այս երգչուհու բառապաշարում, որ սովորական է դարձել շատ-շատերի համար եւ ամեն անգամ ծեփվում է հերթական մախադասության որբել մասում ու մեր լեզվի ճակատին, հայկական մեթոդիստետի սահմանագծում եղել են երբեք, որ կան այժմ: Իսկ կլինե՞ն հավիտյան հավիտենից: Հագիվ թե: Իրոք, հոգնեցուցիչ է անգլիախոս ժողովուրդներին հատուկ արհեստական շեշտադրումներով մանահատիկ խոսքը, նրանցից անհեթեթորեն թխված, անտեղի, ոչինչ չասող, ապա եւ՝ սե-

թեթեանքի, պարզունակության խարանդ վրան ման «հա»-երի անմիտ ռմբակոծումը հատկապես եթերից, հատկապես գրագետ մարդկանցից:

Անթաթի մասին էլ ասենք ու անցնենք՝ թաթ չունեցողի մասին ենք ասում անթաթ է: Երգչուհուն հարցնենք՝ մի՞թե ճշգրիտ արտահայտվելը, բառերի արտասանության քերականական-ուղղախոսական կանոնները պահպանելը բոլորի համար պարտադիր չէ: Հա՞...:

Շրջապատի կարծիքն անտեսելու, մարդկանց արհամարհելու, անաբող գոռաբայության ու մեծամտության հոտ է գալիս ման աստղ-աստղիկների խոսքերից: Իսկ ման խոսքերը ծնվում են տվյալ մարդու վարվելակերպից, մտադրությունից, կյանքի մասին ունեցած վերաբերմունքից, որոնք դրսեւորվում եւ իրենց գործնական կիրառում են գտնում հենց առօրյա խոսքում: Ո՞՞ր ինքը մարդն է:

Մայրենի լեզվի նկատմամբ անհոգատարությունը, արհամարհանքը ամեն օր, ամեն առիթով, գրեթե ամեն քայլափոխի մենք զգում ենք: Ասված խոսք է լեզուն վարքագիծ է: Ու՛ն կարող է դուր գալ անճաշակ հագնված, իր անձին կարեւորություն տալու նպատակով գոռոզ-գոռոզ, ավելորդ ճոճվելով, մի խոսքով անճոճի շարժումներով քայլող մարդը: Այնպես էլ որբել մեկին չի կարող դուր գալ անճաշակ, անճոճի խոսելածներ: Արի հասկացիր, թե ի՞նչ է ուզում ասել կլորիկ, դուրս ընկած փորով, հանրությանը հայտնի մարդն իր խառնիփնթոր խոսքերով. «Հիվանդությունս չժանրաբեռնեմքնեք, մեկ ա, երեսուն տարի ապրելու եմ...»:

Իսկ թե ի՞նչ է ուզում ասել ֆուտբոլի հաղորդավարը՝ «Թիմերը մեկական գնդակներով փոխանակվեցին»: Կամ «կզանգվեմք, կհանդիպվեմք, կխոսվեմք»-ների հեղինակները: Հասկանալ կարելի է մեծ ճիգով. թիմերը մեկական գնդակ խփեցին միմյանց դարպասը, մյուսները պայմանավորվում են իրար գանգել, հանդիպել, խոսել, գրուցել: Միայն թե այդ ամենը մայրենի լեզվի «հերն անհիծելու» գնով, հիմնովին ավերելով քերականական ու խոսակցական ամեն մի կարգ

ու կանոն: Լսենք շարունակությունը. ընկերը հարցնում է «Հաստատ կհանդիպվե՞մք»: Պատասխանը՝ «Բա ո՞նց, տատուս արեւ, կհանդիպվեմք»: Մի՞թե զարհուրելի ու գռեհիկ չեն ինչ որ տեղ, չգիտես ինչպես, ծլած և լավ է, դեռ մարզերում չծլարձակած այս «տատուս, պապուս արեւները»: Իսկ եթե փորձեն երդվել հոր, մոր արեւո՞վ, մանաբանության նույն օրենքով ինչպե՞ս կհաջողեն: «Հորուս» արեւն անհեթեթություն է, «մորուս» արեւն առավել քան անհեթեթություն է...մորուսը, դե, հայտնի է, բեղ-մորուսն է, որ եղել է ու կա այսօր, վաղը եւ հավիտենա հավիտենից:

Միայն, անիմաստ, տգեղ խոսքերի, նախադասությունների օրինակներ հազարներով կարելի է բերել: Ինչո՞ւ ենք այսպես ու այսքան անտարբեր մեր լեզվի նկատմամբ, ինչո՞ւ ենք գռեհկացնում, այլանդակում, զանահարում ամեն ժամ, ամեն րոպե, ինչո՞ւ է մեզանում վերացել լեզվի նկատմամբ պաշտամունքը, այն պաշտամունքը, որ եղել է դարեր շարունակ, որ եղել է լեզվի ծագման օրվանից, երբ այն միանշանակ պատվեցինք «ՄԱՅՐԵՆԻ» անվամբ: Մի՞թե մեր մայրերն այսպես են խոսել, մի՞թե մեր մայրերը սրբորեն չեն փոխանցել մեզ մեր նախնիներից ժառանգած ու դարերի մաքառումներում մաքրված-թրծված, ազնվացած ու լուսավոր մեր լեզուն:

Մի իմաստուն է ասել «Եթե ինձ հարցնեն ո՞րն է կյանքում ավելի անպաշտպան, ես կասեմ մայրենի լեզուն»: Բավական չէ՞ ամեն օր, ամեն րոպե ծանր քարեր նետենք մեր լեզվի վրա, արդյոք բավ չէ՞ նորից ու նորից վիրավորել, գունատել ոսկեղենիկ մեր լեզուն: Սթափվելու, խորհելու, մեր վերաբերմունքը հիմնովին փոխելու ժամանակը չէ՞:

Այո, մեր լեզուն պաշտպանության տակ առնելու, խնամք ու հոգատարություն ցուցաբերելու ճիշտ եւ ճիշտ ժամանակն է: Արժե եւ շատ էլ դժվար բան չէ իմաստունների խոսքերին հետամուտ լինել և հետապնդել հիշել՝ «**Լեզուն մեր պետականության, ինքնության, գոյի ամենաողնաշարային արժեքներից ամենազվախալորն է:**»:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

40 Հայ զինվոր-ռազմիկի վարքականոնը

Արցախյան գոյամարտի ընթացքում էլ հայ շատ զինվորականներ Դավթի ու Նժդեհի պես են վարվել թշնամու խաղաղ բնակիչների հետ հոջալուում, Զաշաթաղի, Զարվաճառի շրջաններում, այլ վայրերում: «Հայկական ազգային հոգեկերտվածքը մեծապես նախափանց կմնա, եթե ուսումնասիրվի առանց դարերով գոյատևած հայկական զինվորական բարոյաբանությունը հաշվի առնելու», – իր խոսքում նշեց Ա. Այվազյանը: Կայքի բաժինների, ձեռավորման վերաբերյալ ներկաների կողմից եղան հարցադրումներ, առաջարկներ: Միջոցառման ավարտին հնչեցին ռազմահայրենասիրական երգեր եւ բանաստեղծություններ: Ավետիք Իսահանյանի բանաստեղծությունների ամունքով հանդես եկան ուսանողները: Իր գրած բանաստեղծությունն ընթերցեց Ռուբեն Թարումյանը, որ նաեւ կայքի ձեռավորման պատասխանատուն է: Երգիչ Արսեն Համբարյանը կարեւորեց կայքի ստեղծումը, հույս հայտնեց, որ այն իր դրական ազդեցությունը կունենա հայոց բանակում, դպրոցներում: Այնուհետեւ կատարեց Վարուժանի «Ձոն» բանաստեղծության հիման վրա գրած իր երգը, ինչպես նաեւ՝ «Սարդարապատ» հեղինակային երգը, որը նվիրված է Սարդարապատի հերոսամարտին:

Չոհրաբ ԸՈՔՈՆՅԱՆ

- ◆ Ի՞նչ է պատիվը, հարգանքը մարդկանց, – լոկ ոսկուց-վախից հարգ են մատուցում, Իսկ երբ սայթաքես, մուճակիդ փոշին մեծ մարդ է դառնում և քեզ հարվածում:
- ◆ Ի՞նչ է օրենքը, – մարդկանցից օրհնած, բիրտ ուժեղների այդ սուրը դաժան, Անզորի գլխին կախված հավիտյան, խեղճին խողխողող, հզորին պաշտպան:
- ◆ Դուք, որ հեգնեցիք ուժն ստեղծագործ՝ Ձեր կյուրթի հանդեպ կգա ոգու սով. Եվ մուրացկի պես փշրանքի համար Ծարավ ու կոթի կանցնեք ծովից ծով: 1903 թ.

Ավետիք ԻՍԱՀԱՆՅԱՆ

Հանդիպումներ ֆրանսիական քաղաքներում

Հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների ամրապնդման առաջնային գործունեւորից մեկը տասնամյակներ շարունակ եղել է այսօր էլ մտում է հայոց անկորնչելի գանձը՝ բազմադարյան մեր մշակույթը, այդ գանձն արարող-մշտանորոգ պահող արվեստագետները, գրի ու գրչության մարդիկ, ովքեր հաճախ են այցելում աշխարհի տարբեր երկրների հայաստան հանգրվաններ, հանդիպումներ ունենում հայրենիքի անմեղ կարոտով ապրող մեր հայրենակիցների հետ, ձեռնարկում կամ մասնակցում ազգաշահ տարբեր միջոցառումների, նոր լիցքեր հաղորդում գաղթօջախներին:

Այս խորհուրդն ուներ մեր բարեկամ երկրի՝ Ֆրանսիայի Մարսել քաղաքի Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցու «Սուրբ Սահակ-Մեսրոպ Մաշտոց» մշակույթի տան դահլիճում օրերս տեղի ունեցած միջոցառումը՝ «Հայոց պատմություն եւ պոեզիա» ծրագրի շրջանակներում: Այն սկսվեց Գրիգոր Նարեկացու փոստ-աղոթքների, հայ դասական բանաստեղծների լավագույն ստեղծագործությունների՝ Ջիվան Սարգսյանի տպավորիչ մատուցումով: Իսկ թե ինչ թեմայի շուրջ էր լինելու հայրենաբնակ ազգաշունչ գրող, արձակագիր, սքանչելի գրքերի հեղինակ Կարո Վարդանյանի բանախոսությունը՝ դրա ընտրությունը նա վերապահեց միջոցառման մասնակիցներին: Հետագայում եղավ այդ ընտրությունը՝ սփյուռքի 1970-1980-ական թվականների զինյալ պայքարը. ասել է թե՛ սփյուռքահայերի ուշադրությունը տակավին սեւեռված է մտում Հայկական հարցի բարձրաձայնման առաքելությանը որդեգրված ԱՍԱԼԱ-ի՝ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի անձնագրի տղաների գործունեությանն անցյալ դարավերջին: Ներկաները հենց այդ սպասարկող մասին գերադասեցին լսել վերստին, չնայած հոգեհարազատ էին նաեւ բանախոսելու պատրաստ մյուս երկու թեմաները՝ Նուրիյան 20-րդ դարի Անդրանիկի 1918 թվականի արշավանքը դեպի Նախիջեւան, Սյունիք եւ Արցախ եւ 78 տարեկանում ԱՍԱԼԱ-ի պայքարի կանթեղը վառած ծերունի ասպետի՝ Գուրգեն Յանիկյանի կյանքն ու գործունեությունը:



ընդամենացած խիղճը: Նույն ծրագրի շրջանակներում հերթական միջոցառումը տեղի ունեցավ Ֆրանսիայի Աժեն քաղաքում, որը նախաձեռնել էր վանաձորցի Սերգեյ Սարգսյանը, իսկ կազմակերպիչները Աժենի «Փոքրիկ հայեր» հայկական կրթօջախի տնօրեն Սուսաննա Կիրակոսյանը եւ ուսուցչուհի Կարինե Խաչատրյանն էին: Հյուրընկալ ու հարմարավետ դահլիճը տրամադրել էր տնօրենի գործարար որդին՝ Արկադի Կիրակոսյանը՝ հոգալով նաեւ միջոցառման կազմակերպման եւ անցկացման անհրաժեշտ ծախսերը:

Նակիցներին կլանել էր այնպես, որ մոռացել էին օրվա տարածամ կեսգիշեր լինելը: Հարցեր, հարցեր եւ երախտիքի արտահայտություններ, անթաքույց հիացական վերաբերմունքի ակնհայտ դրսեւորումով: Առանձնակի տպավորիչ ու առիթնող էր Կոմիտաս վարդապետ Հովհաննիսի՝ հայաստանցի հյուրերին ուղղված գնահատանքի խոսքը: Նվազ տպավորված էին նաեւ մյուս արտահայտվողները՝ հյուրընկալ մշակույթի տան տնօրեն Ժան-ժակ Բեդիկյանը, բանաստեղծ, թարգմանիչ Կարեն Խուրշուջյանը, միջոցառման կազմակերպիչներից տեր Գառնիկ քահանա Կարապետյանը, «Ինտերկապ» բարեգործական միության պատվավոր անդամ Կահան Դեգոյանը, նրա տիկին Սիմե Զենյանը, այլը: Հանդիպման ավարտին «Ինտերկապի» նախագահ Նորայր Չուլոյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին՝ եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Արամ քահանա Ղազարյանին, մշակույթի տան ղեկավարությանն ու աշխատակիցներին: Նա «Երախտիքի գիր» հանձնեց Ժան-ժակ Բեդիկյանին, միջոցառման մյուս աշակիցներին: Նվիրաբերեց Նարեկացու «Մատյան ողբերգության» հավերժախոս պոեմի՝ Ջիվան Սարգսյանի ընթերցմամբ ծայնագրության խտասալիկը եւ որ նույնքան փայլալի է՝ հանդիպման գլխավոր բանախոսի՝ Կարո Վարդանյանի՝ տարիներ առաջ հրատարակած «Պայթյուններ Թուրքիայում եւ ոչ միայն...» մեծարժեք գիրքը՝ նվիրված ԱՍԱԼԱ-ի քաջագուններին, ովքեր իրենց կյանքի գնով շահացին արթնացնել մեծ տերությունների ու մարդկության

Տնօրենի բարիգալստյան խոսքից հետո կրթօջախի սաներն աղուհացով ողջունեցին հայրենիքից իրենց այցելած պատվարժան հյուրերին, այնուհետեւ հանդես եկան գրական-երաժշտական հայեցի ու գեղեցիկ կատարումներով: Այսպես համակ ուշադրությամբ ունկնդրեցին Կարո Վարդանյանին, հմայվեցին Ջիվան Սարգսյանի ասմունքով, ստացան իրենց հետաքրքրող տարաբնույթ հարցերի պատասխանները: «Ինտերկապի» նախագահ Նորայր Չուլոյանը այստեղ նույնպես երախտիքի գրքի արժանացրեց հանդիպման ու միջոցառման կազմակերպիչներին՝ Սուսաննա եւ Արկադի Կիրակոսյաններին, Սերգեյ Սարգսյանին: Կրթօջախի սաներից շատերի համար այդ հանդիպումը առավել հիշարժան էր դառնալու. այդ օրը մի խումբ երեխաներ ստացան իրենց ավարտական վկայականները...

Հակոբ ՄՐԱՊՅԱԼ



Աշխույժ, տաք մթնոլորտում անցած բանախոսությունը միջոցառման մաս-

<p>◆ Հիմի է՛լ լռեցք, մարդիկ ի՛նչ կասեն, Երբ մեր տեղ քարիքը, ապառք խոսեն, Զե՛ն սաիլ, որ Հայք արժանի էին Այդ ըստրկական անարգ վիճակին: Մեր սուրբ քաջ նախնայաց գործերը լավ գիտենք, Մինչև ե՛րբ լռեցք:</p> <p style="text-align: center;">Ռաֆաել ՊՍԿԱՆՅԱԼ</p>	<p>■ Ազգային հոգին հռոմեացիներին դարձրեց աշխարհի տերը, կորցնելով այդ հոգին՝ կորավ Հոռոմը:</p>
<p>◆ Հայոց որդիք խլացած են, Լսել չկամին քո օ՛րո՛ր, Ստրկության ծանր լծի տակ Ճնշվել կամին ամեն օր:</p>	<p>■ Ժողովուրդների արյունն ու արցունքը պիտի չդադարի, մինչև որ նրանք ինքնօտարությամբ ոտքի չկանգնեն, մինչև չհզորանան հոգով:</p> <p style="text-align: right;">ՌԱՅԻ</p>

ՄԻ ԽԻՉԱԽՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայոց պատմությունն ու պոեզիան մոտիկ եւ հեռու սփյուռքում

Խիզախում. այս մեն-միակ բառը բնութագրում ու արժանվույն է գնահատում հայրենասեր երեք հայորդիների անօրինակ, աննախադեպ, անչափ համարձակ, իր տեսակի մեջ առաջօրեզակի նախածեռնությունը, որն իրագործվեց 60 օրում՝ Վրաստանի, Ռուսաստանի, Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Հոլանդիայի հայաշատ քաղաքներում: Նրանք անցնելով ավելի քան 11 000 կմ ցամաքային եւ 7 000 կմ օդային ճամփաներ, հնչեցրին հայոց պատմության լուսավոր էջերից հայտնի ու մինչ այժմ անհայտ հերոսական դրվագներ, հայոց պոեզիայի անմահ գոհարներից ամենակատարյալները: Նախածեռնությունը եզակի եւք անվանում է Լաեա այն իմաստով, որ ամեն ինչ իրագործվեց առանց պետական որոշման քաղաքական եւ դրամաշնորհների:

Այդ երեք այրերին միավորեց ու չափազանց համարձակ ձեռնարկին մոեց հայրենիքին այդկերպ օգտակար լինելու ու ծառայելու տեւը, ազգային գարթոնքի մասին նրանց ունեցած պատկերացումների ու նպատակի միասնությունը:

Նրանք մինչ այս նախածեռնությունն էլ հանրությանը քաջածանոթ, յուրաքանչյուրն իր բնագավառում բարձունքների հասած ու շրջապատի սերն ու հարգանքը նվաճած այրեր են:

Նորայր Չուլոյան – «Ինտերկապ» բարեգործական կենտրոնի հիմնադիր-նախագահ, Վանաձորի պատվավոր քաղաքացի, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Եւ ՊՈՇԻՉԻԿ պատմամշակութային հանդիպումների գաղափարի հեղինակը, ռզեկոչողը, նախածեռնողն ու իրականացնողը («Ինտերկապ» ՀԿ-ի մարզական, կրթական, մշակութային, հայրենասիրական գործունեությանը 1990 թ.-ից մինչ օրս բազմիցս լուսաբանվել է մեր եւ միջազգային ՉԼՄ-ներում):

Կարո Վարդանյան – գրող, գրականագետ, հրապարակախոս, պատմագետ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, մի շարք պատմական, գեղարվեստական եւ փաստագրական ազգաշունչ գրքերի հեղինակ:

Զիվան Սարգսյան – թատրոնի եւ կինոյի սիրված արտիստ, ասմունքի ժողովրդական վարպետ, Մովսես Խորենացի մեդալակիր: Հայոց Մեծերի պոեզիայի անմեռ նմուշներից նրա մեկնաբանությամբ ընթերցումները անչափ երկար են արձագանքում լսողների հիշողություններում:

Մի օր էլ ուրվագծվեց յուրաքանչյուրի անկիղձ՝ ըստ իր ունեցած հնարավորությունների: Նրանք վստահ էին, որ Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների ամրապնդման առաջնային գործոններից մեկը միշտ էլ եղել ու մնում է հայոց անկորնչելի հարստությունը՝ բազմադարյան մեր մշակութային գանձերը, նաեւ սփյուռքի մեր



հայրենակիցներին հասանելի դարձնելն է, նրանցով բազմախազար կարոտաբաղձ սրտեր հուզավառելը: Սեփական գործնական ուղեւորություններից ու փորձից լեւելով՝ նախածեռնողը համոզված էր, թե ինչ կարոտով են մեր հայրենակիցներն սպասում հայոց բառուբանին, պատմությանը, հայտնի արվեստագետներին, ինչպիսի լիցքեր են ստանում մեր գաղթօջախները նման հանդիպումներից:

Արդյունքն ավելի քան գոհացուցիչ էր եւ լիարժեք էր արտահայտում եռյակի ակնկալիքները: Հայրենիքի ներկա ընթացքով ապրող մեր ազգակիցներնայլ մատուցվելիք թեմաներից պիտի իմանային ու վերահամոզվեին, որ մեր ժողովուրդը ունեցել է շատ ավելի օրհասական ու ողբերգական ժամանակներ, ունեցել է տարածքների ու մարդկային անդառնալի, անհատուցելի կորուստներ, բայց եւ ունեցել է լուսավոր դեմքեր, անձնուրաց առաջնորդներ ու գորավարներ, ովքեր իրենց աննկուն կեցվածքով ու հայրական հոգածությամբ ապավեն են դարձել իրենց երից բզկտված ժողովրդին:

Առաջին թեման ընտրված էր՝ «Չորավար Անդրանիկի 1918-19թ.թ. արշավանքը ղեպի՝ Նախիջեան, Սյունիք եւ Արցախ»: Սփյուռքահայերի ուշադրությունը մշտապես բեւեռված եղել է մնում է Հայկական հարցի բարձրաձայնման առաքելությունը որդեգրած ԱՍԱԼԱ-ի՝ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի, անձնագոհ տղաների անձնուրաց գործունեությունն անցյալ դարավերջին: Կարո Վարդանյանը պատրաստ ուներ նաեւ ոչ պակաս կարեւոր, ոչ պակաս հետաքրքիր եւս երկու թեմա՝ «78 տարեկանում ԱՍԱԼԱ-ի պայքարի կանթեղը վառած ավագագույն ասպետ Գուգեն Յանիկյանի կյանքն ու գործունեությունը» եւ «Սփյուռքի 1970-1980-ական թվականների զինյալ պայքարը կորսված տարածքների վերադարձման եւ Հայոց Ցեղասպանության հանրայնացման նպատակով»:

Այդ հետո պիտի պարզվեր, որ մեր հայրենակիցները, հաճախ մինչեւ կեսգիշեր հասնող հանդիպումների ընթացքում, իրենք բազմապիսի, հետաքրքրող հարցերով հեղինակին ստիպելու էին անդրադառնալ նշված բոլոր թեմաներին

Էլ, քանդելով դրանց միջեւ գոյություն ունեցող «չինական փոքրիկ պարիսպը»: Այդ պատմություններն առավել տպավորիչ, ընկալելի դարձնելու նպատակով որոշվեց դրանք ընդմիջարկել մեր տաղանդաշատ բանաստեղծների՝ Նարեկացու, Թումանյանի, Չարենցի, Շիրազի, Սեւակի, այլ երախտավորների հատընտիր քերթվածքներով, որոնք համահունչ են ներկայացվող պատմություններին: Ընտրվեց միջոցառումների շարքի խորագիրը՝ «Հայոց պատմություն եւ պոեզիա»: Իհարկե, այս ամենն այնքան էլ հեշտ չծնվեց-չընտրվեց, մնում էր իրագործման բարդագույն խնդրի լուծումը, առանց որի անհնար էր առաջընթաց որեւէ քալ կատարելը:

Իսկ ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով հասնել սփյուռքի մեր հայրենակիցներին, ո՞ր երկրներում, ո՞ր քաղաքներում, ու՞մ օգնությամբ կազմակերպել հանդիպումների շարանը... Այս հոգեսերը պիտի լուծվեին եւ լուծվեցին հաջողությամբ՝ Չուլոյանի եւ «Ինտերկապի» համակիրների շնորհիվ: Սկզբից ընտրվեցին Վրաստանի եւ Ռուսաստանի հայաիւծ քաղաքները: Առաջին հանդիպումը կայացավ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում՝ Վիրահայոց թեմի «Հայկրտուն» մշակութային կենտրոնում: Արդյունքն սպասելի էր՝ շնորհալից: Նրանք ելույթները նմանատիպ գնահատանքի արժանացրին նաեւ Բաթումի, Կրասնոդար, Արմավիր, Պյատիգորսկ քաղաքների հայերը: «Հայոց պատմություն եւ պոեզիան» Եվրոպական երկրներում» ծրագրի մեկնարկը տրվեց Նոյեմբերի 5-ին Գերմանիայի Կյոլնքքուրգ քաղաքում, ապա միջոցառումներն ու գործնական հանդիպումները տեղի ունեցան հավերժական քաղաք Հռոմում, Ֆրանսիական Նիցցա, Մարսել, Ամեն, Վալանս, Ռոմանս, Լիլ, Փարիզ, Բելգիայի Մեխելեն քաղաքներում, որակում եւս մեր հայրենակիցները հավուր պատշաճի արժեւորեցին ոգեշունչ հանդիպումների շարքը, եռյակի եռանդը, բանախոսի անսպառ գիտելիքները, արտիստի կրակոտ ասմունքը: Դրանց մասին մեր թերթը ժամանակին անդրադարձել է:

Դեկտեմբերի 10-ին խումբը Հաագայում էր: Մաթո Հախվերդյանի հիմնադրած 30-ամյա Աբովյան մշակութային միությունում Կարո Վարդանյանի հայոց պատմության անհայտ, կամ քիչ հայտնի դրվագները, որ փաստարկված էին արխիվային կարեւոր ու հետաքրքիր նյութերով, ընդմիջվում էին ոչ միայն Զիվան Սարգսյանի կատարումներով, այլեւ սաների երգուպարով, ասմունքով, Աբովյան միության երգչախմբի կատարումներով: Ծրագիրը բավական հետաքրքիր ու հազեցած էր եւ այն անտարբեր չթողեց միջոցառման ունկնդիրներին, որին ներկա գտնվեց նաեւ Հոլանդիայում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Բալայանը: Դեկտեմբերի 11-ին Ավելոյի «ՍՈՒՐՔ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» կիրակնօրյա դպրոցի դահլիճը լեփ-լեցուն էր՝ ի շնորհիվ տնօրեն Սվետլանա Անդրեասյանի, նրա թիմի մանկավարժների եւ ծխական խորհր-

70

դի անդամների, ներկայությամբ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցու քահանա Տեր Մաշտոց Բաղդասարյանի:

«Նիդերլանդական օրագիր» տեղեկատվական կայքի հիմնադիր, լրագրող Աշոտ Կնյազյանը բարձր գնահատեց հոլանդական հանդիպումների շարքը, նշելով, որ «Հայոց պետության համար այս դժվարագույն օրերին եռյակը բարձր է պահում հայի ազատագրական ոգին»: Հիշատակվում է նաև, որ Ասեն քաղաքի Հայոց Տեղասպանության անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար-հուշարձանը Վանաձորից բերվել է «Ինտերկապի» ջանքերով: Օրագրի էջերից էլ տեղեկանում ենք, որ Հայոց պատմությունն է Պոեզիա նախաձեռնության հեղինակները ճանաչվել են «Տարվա լավագույն մշակութային միջոցառումների կազմակերպիչներ» անվանակարգի հաղողներ են արժանացել են «Նիդերլանդական օրագիր» լրատվամիջոցի սահմանած մրցանակներին:

Միջոցառումների վերջին ակորդը հնչեց Բեռլինում, որի կայացմանն անուրանալի ներդրում ունեցավ նախաձեռնությամբ խանդավառված մի եռանդաշատ մարդ, ազգությամբ գերմանացի, Նորայր Չուլոյանի 35 տարվա ընկեր, բարեկամ, հայասեր Ռայներ Զոգելը, ով դեռ մինչև եռյակի շրջագայությունը առաջիններից առաջինը ողջունեց նախաձեռնության հեղինակների՝ եվրոպական երկրներում հյուրասիրողները հանդես գալու որոշումը, հորդորեց անհապաղ իրագործել այն, վստահեցնելով, որ բոլոր հարցերով խիզախների թիկունքին է:

Եւ Բեռլինում էլ խոսեց Կարո Վարդանյանը, ե ունկնդիրների աջի առջե հաննեցին անցյալի հերոսական օրերը. ահա, հայոց վերջին լեռնանցքով շարժվում է ապաբախտ Չորավարը՝ դեպի թշնամու հայեցողությանը հանձնված Նախիջեան, Սյունիք ու Արցախ աշխարհներ: Նա չի ընդունում, չի ճանաչում որեւէ պայմանագիր կամ դաշնագիր, որոնք չեն արտահայտում իր ու իր ժողովրդի կամքը: Գաղթականության բազմահազարանոց թափորը մի քայլ անգամ չի հեռանում իր ապավեն Չորավարից, ու դա մեծապես կաշկանդում է Անդրանիկի զորաշարժը, խոչընդոտում լիարժեք ու անդրանիկավարի հարվածելու ամեն կողմից հարձակվող թշնամուն: Բայց նա գիտե, որ ճակատագրով իրեն է վերապահված անառիկ պահելու Հայաստանի վերջին կենսական տարածքները, հոգալու իրեն ապավինած ժողովրդի վերջին բեկորների ապահովությունը: Այս խելահեղ ու ազգափրկիչ արշավանքի մանրամասները եւ անասելի հուզում պատճառեցին պատմական այս անցքերին անտեղյակ մեր հայրենակիցներին, եւ տոգորեցին նրանց հավատով ու հպարտությամբ: Թեեւ եռյակի համար հանդիպումներում մարդկանց խանդավառությունը նորություն չէր, բայց ամեն անգամ ծափողջունների արժանանալիս իրենք էլ խանդավառվում էին այն մտքից, որ նախաձեռնությունը շատ տեղին էր ու շատ էլ սպասելու:

«Ինտերկապի» նախագահը ամենուր



Լուսանկարում՝ Նորայր Չուլոյան, Ռայներ Զոգել, Զիվան Սարգսյան, Կարո Վարդանյան

«Երախտիքի գիր» հանձնեց միջոցառումների բոլոր կազմակերպիչներին: Տղաները մեր հայրենակիցներին սիրով նվիրեցին Նարեկացու «Մատյան ողբերգության» հավերժախոս պոեմի՝ Զիվան Սարգսյանի ընթերցմամբ եւ Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ տեր Հովհան Եպիսկոպոս Հակոբյանի օրհնությամբ աշխարհ եկած ձայնագրության խոսակավառակը եւ որ նույնքան փայլալեզի է հանդիպման գլխավոր բանախոսի՝ Կարո Վարդանյանի՝ տարիներ առաջ հրատարակած «Պայթյուններ թուրքիայում եւ ոչ միայն...» անգուգական գիրքը:

«Հայոց պատմությունն ու պոեզիան» ծրագիրն իրագործող խումբը սիրով ու երախտիքի անսահման չափաբաժնով հիշելու է նախաձեռնությանը ամեն կերպ աջակցած անհատներին, կազմակերպություններին, բոլոր ինֆորմացիոն գործընկերներին, որոնց թվում է նաև «ՀՀ» օրաթերթը: Նրանց ջերմագին հավատի ու սիրառատ բարերարության շնորհիվ հնարավոր դարձավ իրագործել արդեն իսկ ձեռնարկված ԽԻՉԱ-ԽՈՒՄԸ: Ահա նրանք:

Թիֆլիսի – «Հայ Արվեստի Տան» ղեկավար Եվգենիա Մարկոսյան, Տեր Կիրակոս քահանա Սիմոնյան, ԻՆՏԵՐԿԱՊ-ի պատվավոր անդամներ Յուրա Աբուլյան եւ Թամազ Բեկաուրի:

Բաթումի – Տեր Արարատ քահանա Գումբարյան: **Կրասնոդար** – Երագին Հարությունյան ու Սարգիս Ակոսյան, Արմեն Գասպարյան ու ԻՆՏԵՐԿԱՊ-ի փոխնախագահ Նորիկ Մկրտչյան:

Արմավիր – Հայ համաձայնի մշակույթի տան ղեկավար Ռոբերտ Գալուստով, գրող մեթոդիստ Գայանե Վարդանյան:

Պատիզորսկ – Թամարա Բեշիշյան, Վանիկ Սարկիսյան եւ ԱՌԳՈ հյուրանոցի սեփականատեր Բագրատ Մուսաեյան:

Վյուրցբուրգ – Ռայներ Զոգելի գլխավորությամբ Արմեն Գալստյան, Ռուդոլֆ Գուստին, Վյուրցբուրգի Հայկական Համայնք, Հայ Ավետարանչական Եկեղեցի, Ռաֆիկ Ժամարյան, Լեոն Հովիվյան, Հրաչ Հովհաննիսյան, Արթուր Անիոյան, Միեր Հայրապետյան, Տեր Այգիկ:

Բեռլին – Տեր Եղիշե Վարդապետ Ավետիսյան, Բեռլինի հայկական մշակույթի տան տնօրեն Սոնա Այվեր, Հայկ

Կակոսյան:

Հոմ – Սոնիկ Թաթայանի եւ կոմպոզիտոր Անտոնի Չեկլիկի ընտանիք, Արեւմտյան Եվրոպայի Հ.Ա.Ե. Հայրապետական պատվիրակ Տեր Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամյան:

Նիցցա – Արշակ եւ Արմեն Պետրոսյաններ, Արայիկ Մկրտչյան եւ Գառնիկ Մազմանյան:

Մարսել – «Ինտերկապ»-ի պատվավոր անդամ Վահան Դեգոյան եւ Նրա տիկին Սիմե Չենյան, Տեր Արամ քահանա Ղազարյան, թեմական խորհրդի ատենապետ ու «Բարձունք 5165» ասոցիացիայի նախագահ Ռոբերտ Ազիլագեան, «ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ» մշակույթի տան տնօրեն Ժան-ժակ Բեդիկյան, բանաստեղծ, թարգմանիչ Կարեն Խուրշուջյան, տեր Գառնիկ քահանա Կարապետյան, Արսեն Ակոբ/Տերտերյան, Հարութ Չենյան եւ տեր Կոմիտաս Վարդապետ Հովհաննյան:

Ստե – «Ինտերկապ»-ի պատվավոր անդամ Սերգեյ Սարկիսյանի իր ընտանիքով, Սուսաննա եւ Արկադիկ Կիրակոսյաններ, Միեր Մկրտչյան, Մկրտիչ Գրիգորյան, Սուրեն Բաղդասարյան, Կարեն Ավետիսյան՝ Լեհաստանից, Արսեն Ղազարյան ու Հովհաննես Վարդանյանը Բորոյոյից:

Վալանս – «Ինտերկապ»-ի պատվավոր անդամ Վարդան Թորգոմյան եւ Նրա տիկին Չոյան, ռադիո Ա-ի տնօրինություն:

Ռոմանս – «Ինտերկապ»-ի պատվավոր անդամ Սարգիս Յախիսյան եւ Նրա տիկին Աստղիկ:

Լիոն – Վոլոդյա եւ Սեդա Սարգսյաններ, Կարեն Սարգսյան, Վլադիմիր Կոչյան եւ հայկական «ՌԱԴԻՕ ԱՐՄԵՆԻ»-ի ղեկավարություն:

Փառիզ – «ԻՆՏԵՐԿԱՊ» դե ՖՐԱՆՍԱՍ՝ ասոցիացիայի նախագահ Անդրանիկ Բեշիշեան, ԻՆՏԵՐԿԱՊ-ի Պատվավոր անդամ Անտոնյան Ակոսյան, Գրիգոր Իշխանեան, Անդրանիկ Խոջասարյան ու Տիգրան Բաբայան, Արծրունի Խաչատրյան, ՄԴՀԿ-ի Ֆրանսիայի կառույցի անդամները, Իսսի լե Սուլիոյի հոգեւոր հովիվ Տեր Ավետիս Զահանա Պարզեան ու Շիակյան խորհուրդ, Վազգեն Պարոտեան, Ծերուն Մկրտչյան, Վերապատվելի ժռարդ Լեոնեան:

Լիլ – Սամսոն եւ Արցա Եղշատյաններ՝ ընտանիքով ու հարազատներով, ԱՐԱՐԱՏ մշակութային կենտրոնի ղեկավար Տարթե Բագինյան:

Մեխելեն – ԻՆՏԵՐԿԱՊ-ի Պատվավոր անդամ Գագիկ Հ. Դավթյան՝ ընտանիքով, տեղի ԱՆԻ ՀԱՅՏԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, Լեոն Շանթե հայկական դպրոցի հանրույթ:

Օստրեպոլ – «ՆԻԴԵՐԼԱՆԴԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ» տեղեկատվական կայքի հիմնադիր, լրագրող Աշոտ Կնյազյան:

Հաագա – «ԱՐՈՎՅԱԼ» մշակութային կենտրոնի հիմնադիր տնօրեն Մաթո Հախվերդյան:

Ալմեյդ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ հայկական դպրոցի տնօրեն, Խոզեպան, թարգմանիչ Ավետյան Անդրեասյան, Նրա համակիր թիմակիցներ, Տեր Մաշտոց քահանա Բաղդասարյան:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

◆ Հայերի վիճակը խիստ նման է անառակ որդու առակին, նրանք թողին իրանց հոր տունը, իրանց հայրենիքը, և ցրվեցան օտար աշխարհներ, և պանդխտության մեջ՝ նրանց մեծ մասը մյուս ազգերի անդնդին կուլ գնալուց հետո, մասցածների վիճակը տեսնում ենք. նրանց օրը միշտ սև կլինի մինչև կրկին չգառնան դեպ իրանց հոր տունը և Նորոգեն իրանց բաժանված ուժը և գորությունը:

◆ Մենք չունենք ազնվականություն, առաջնորդներ, ղեկավարներ: Մեր ունեցածը վաճառականությունն ու հոգևորականությունն են: Վաճառականությունն աղբ է, իսկ հոգևորականությունը միշտ դեմ է անհատի ազատությանը: Նրանք, ովքեր պատասխանատու են մեր անվտանգության համար, հանցագործ ավագակախումբ են:

◆ Ինչո՞ւ հայեր, բավական չէ, որ ուրիշները կողոպտում են ձեզ, և ձեր գլխավորները, ձեր իշխանները՝ ձեր մարմնին ցեց են դարձել...:

◆ ... Գողը որ տակից լինի, եզն երդիկից կհանե: – Ծառի որդը իրակից չլինի, հազար տարի կայտեր: – Մեր գողը մեր տակից է, մեր որդն մեր ջանիցն է...:

ԲԱՅՅԻ

Ջավախք աշխարհի հնավայրերում



**Քարճրագահ Աբուլն ու Մըթին սարեր
Մեջք մեջքի տրված կանգնել վեհափառ...
Յոզի. ԹՈՒՄԱՆՅԱՆ**

Վերջերս երկրորդ անգամ եղա Ջավախք աշխարհում: Մշտապես ցանկանում էի տեսնել հատկապես Փարվանա լիճը և Թմկաբերդը, որոնք ժամանակին գերել էին Յոզի. Թումանյանին, և Ամենայն հայոց բանաստեղծն ստեղծել է իր 2 հրաշալի գործերը՝ «Թմկաբերդի առումը» և «Փարվանա»-ն:

Տեսա Թմկաբերդն ու նրանից ոչ շատ հեռու գտնվող Վարճիա-Վարճունիք քարանձավային վանական համալիրը, Խերթվիսի բերդը, Կուռ գետի այն հատվածը, որտեղ թափվում է Փարվանան: Այցելեցի նաև Ախալքալաքի ամրոց: Կորիս գյուղի բնակիչներ Գեորգ Բասենցյանի, Յուրա Խորշիկյանի հետ Խաչիկ Թարգյանի մեքենայով սկսեցինք մեր ուղևորությունը: Կորիսից հասանք Ախալքալաք քաղաքի տակ և Փարվանա կամ Թափարվան գետի հովտով շարունակեցինք ճանապարհը: Քիչ ներքևում Փարվանային է միանում Արագվի գետը: Այս հատվածում հիդրոէլեկտրակայանի ջրահավաք ավազանն է, որտեղից ջրի մի մասն արդեն անցնում է խողովակաշարով ու հասնում Խերթվիսի, որտեղ է հեկ-ը: Կորիսեցի ընկերներն սկսեցինք անցնել հարավում իրենց գեղանի երկրամասի մասին, ներկայացնում ամեն քար ու թուփ, սրբատեղի, աղբյուր, կամուրջ, իրենց մանկության վայրերը, գետի այն հատվածը, որտեղ լողացել են: Փարվանայի ձորում գետի աջ ափին է Շերեփ կոչվող աղբյուրը: Կանգնում ենք, ըմպում սառնորակ ջրից: Գետի ձախափնյա լանջից կանաչապատ հունով 10-ից ավելի առվակներ են ցած իջնում՝ ստեղծելով գեղեցիկ ջրվեժ-տեսարաններ: Նման տեսարան կա նաև Զաշաթաղի շրջանում՝ Միրիկ-Բերդիկ գյուղերի տարածքում, Աղավնո գետի աջափնյա լանջում: Իհարկե՝ Աղավնոյի հովտում ավելի բարձր լանջի բազալտ քարափներից են ծնվում ու ցած իջնում գետակ-ջրվեժները և ավելի շատ են, ջրառատ: Փարվանայի ափամերձ այս հատվածում շատ են լքված բնակատեղիները: Կուռ գետի աջ վտակ Փարվանան Ջավախքի բարձրավանդակի հյուսիսում է՝ ծովի մակարդակից 2000 մ ավելի մետր բարձրության վրա: Սկիզբ է առնում համանուն լճից և հոսում դեպի հարավ, այնուհետև թեքվում հյուսիս, Ախալքալաքը բաժանում 2 մասի և հոսում դեպի Խերթվիս գյուղ, որտեղ էլ միանում է մայր գետ Կուրին՝ մինչ այդ իր մեջ առնելով Արագվի գետը և նշված առու-ջրվեժները: Ունի 47 կմ երկարություն, ջրահավաք ավազանը՝ մոտ 2300 ք/կմ:

Խերթվիս գյուղում է համանուն հզոր ամրոցը, որի պարիսպներն ու աշտարակները, ներսի շինությունները բավականին լավ են պահպանված: Սա խոսում է այն մասին, որ ամրոցը մշտապես գործել է՝ տարբեր ժամանակներում, հատկապես միջնադարում ու դրանից հետո՝ ունենալով տարբեր տերեր: Կրացիներով բնակեցված Խերթվիս գյուղը Կրաստանի Սամցխե-Ջավախք մարզի Ասպինձայի (Ասպինջակ) շրջանում է: Ազգագրագետ Երվանդ Լալայանը Թմկաբերդը կամ Թմկ ամրոցը նկարագրում է. «Պարիսպը, որի կայունությունը 1,5 արշին է, կրով, տեղ-տեղ սրբատաշ քարերով շինված, բոլորում է այս երեք լեռների շուրջը, յուրաքանչյուրի վրա մի-մի աշտարակ բարձրացնելով ու ձգվում գնում կողքի լեռները, ուր միանում է յուրաքանչյուրի վրա շինված մի աշտարակի: Ամրոցը բերդն ունի երեք դուռ՝ հարավից, հյուսիսից և արևելքից, որը տանում է դեպի բլուրը... Դարավային դռան մոտ մի ստորերկրյա անցք ժայռի միջով իջնում է մինչև Կուր ջուր բերելու համար...»: Բարձր լեռան վրա են թառանձ ամրոցի երեքմի պարիսպները, դղյակներն ու այլ շինություններ: Կուռ գետի աջափնյա ճանապարհից նայում

որպեսզանը, վկայակոչելով վրացական աղբյուրներ, հավելում է նաև. «Հայտնի է, որ 1625 թ. Ախալցխայի Սաֆար փաշան գյուղի բնակչությանը բռնությամբ մահմեդականություն է պարտադրել: Ժամանակի ընթացքում, թրքական ճնշումների տեղի տալով, հայերի ազգային ինքնագիտակցությունն իսպառ մարել է: «Կրաստանի աշխարհագրություն»-ի համաձայն՝ Խերթվիսի բերդում տեղակայված էր եկեղեցիների կայազորը: Ըստ «Մշակ» թերթի (1879 թ., հ 157, էջ 1)՝ անունը նշանակում է. «...Խերթվիս առաջ է գալիս Խերթվիս բառից, որ վրացերեն նշանակում է միութիւն, վասն զի կիրճի մեջ միաւորվելով երկու գետակներ սկսում են Թիֆլիսի ծծամայր Կուր գետը»: Գեղեցիկ բնակավայր է՝ Կուրի ափին: Սակայն առավել գեղեցիկ ու հրապուրիչ է դառնում պատմական հուշարձանով՝ 13-րդ դարում վերակառուցված ամրոցով:

Ըստ պատմական աղբյուրների՝ այս բերդն ավելի հին պատմություն ունի, հիմնադրվել է Ք. ա. 6-րդ դարում՝ հավանաբար պարսից Կյուրոս արքայի կողմից, նրա կյանքի վերջում: Կրացի պատմիչ-եպիսկոպոս Լեոնտի Սրովելլին՝ Ղեւնոյ Ռուխեցին, ով ապրել է 11-րդ դարում և տարբեր երկրի շարքում գրել է «Կրաց թագավորների և նախահայրեր ու տոհմերի պատմությունը» պատմական երկը, Խերթվիսը հիշատակում է որպես պատմական Մեսիթթի կենտրոն-քաղաք: Կրացական այլ պատմական աղբյուրներում հիշատակվում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին իր արշավանքի ժամանակ դեմ է առել Խերթվիս ամրոցի դիմակայությանը: Այս ամրոցի պարիսպների տակ է կանգ առել նաև հռոմեացի զորավար Պոմպեոսը Ք. ա. առաջին դարում: Ամրոցում կա նաև եկեղեցի, որը կառուցվել է 985 թ.: Բազմաշերտ ամրոցը կազմված է վերնամասում գտնվող միջնաբերդից և ներքին ամրոցից: Սոնդոլներն այս ամրոցը նույնպես գրավել են 13-րդ դարում, ավերել: Նույն դարում՝ 1283 թ. տեղի ունեցած հզոր երկրաշարժն էլ իր ավերածությունն է թողել: 1354-1356 թթ. ամրոցը վերականգնվել է: Ըստ պատմության՝ վրաց ազգային հերոս Գեորգի Սահակաձեն 1624 թ. պարսիկներից ազատագրել է Խերթվիսի ամրոցը: 1 դար անց արդեն թուրքերն են տիրել ամրոցին, և այդ ժամանակ էլ տեղի հայ բնակիչները հեռացել են: 1828 թ. ռուսներն են գրավել բերդը: Այնուհետև այն որպես ամրոց դադարել է գոյատևել: Այսօր այն արդեն զբոսաշրջիկներին է հետաքրքրում:

Խերթվիսից մոտ 5 կմ հարավ-արևմուտք է Թումանյանի երգած հերոս Թաթուլ իշխանի հզոր Թմկաբերդը, որը հայտնի է եղել նաև Թմուկ կամ Թմբուկ, Թմուզվի անուններով: Միջնադարյան այս բերդը Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Վերին Ջավախք գավառում է՝ Կուր գետի ձախ ափին, ներկայումս Կրաստանի Սամցխե-Ջավախք մարզի Ասպինձայի (Ասպինջակ) շրջանում: Ազգագրագետ Երվանդ Լալայանը Թմկաբերդը կամ Թմկ ամրոցը նկարագրում է. «Պարիսպը, որի կայունությունը 1,5 արշին է, կրով, տեղ-տեղ սրբատաշ քարերով շինված, բոլորում է այս երեք լեռների շուրջը, յուրաքանչյուրի վրա մի-մի աշտարակ բարձրացնելով ու ձգվում գնում կողքի լեռները, ուր միանում է յուրաքանչյուրի վրա շինված մի աշտարակի: Ամրոցը բերդն ունի երեք դուռ՝ հարավից, հյուսիսից և արևելքից, որը տանում է դեպի բլուրը... Դարավային դռան մոտ մի ստորերկրյա անցք ժայռի միջով իջնում է մինչև Կուր ջուր բերելու համար...»: Բարձր լեռան վրա են թառանձ ամրոցի երեքմի պարիսպները, դղյակներն ու այլ շինություններ: Կուռ գետի աջափնյա ճանապարհից նայում


90

ենք, հիանում ու հիշում Թումանյանին: Ամբողջովին ժայռից կերտված բլրալանջին երեւում է միջնադարյան եկեղեցու դեղնավուն կիսավերակը՝ կառչած ու միաձուլված գրեթե ուղղաձիգ դիրքով տարածքին: Քիչ հեռվում հզոր պարիսպն է, որ շարվել է բնական ամրության թույլ մատում: Ամրոցը պահող հարավային ժայռակերտն է գրեթե ուղղաձիգ լանջն սկսվում է գետի ձախակողմյան ափից՝ հենց հունից: Յուրայի հետ մոտենում ենք կիրճի ափին. լուսանկարում են: Ժայռի երկայնքով պարիսպ է իջնում դեպի գետ: Պարսպապատերին կից կան օժանդակ շինություններ եւ ժայռակերտ աստիճաններով մինչեւ Կուր գետի ափը ձգվող գետնուղի:

– Այս ժայռից են ցած գլորել Թմկա տիրուհուն, – ասում է Յուրան ու գանգատվում դավաճանության, մատնության համար: Ակամայից հիշում են Թումանյանի տողերը.

Տարան անտակ էն ժեռ քարից,
Որ կանգնած է մինչ Էսօր,
Էն ահավոր քարի ծերից
Գըլորեցին դեպի ձոր:

Պատմական առումով որեւէ տեղ չի հիշատակվում այս դավաճանության մասին: ԹՄՈԶ (ԹՄԿԱԲԵՐԴ) անունը ծագում է «մոզ» բառից (թմոզվ-ի): Թմկաբերդն առաջին անգամ հիշատակվում է Ժ դարի աղբյուրներում: Այն վերահսկում էր առեւտրական ուղիները, որոնք Ջավախք աշխարհը կապում էին Առաջավոր Ասիա-



յի հետ: 11-րդ դարի վրաց Անանուն պատմիչն արաբական արշավանքների հետ կապված գրել է. «...այնտեղից մտավ Սամցխե եւ ավերեց Սամցխեն ու Ջավախքը (Ջավախեթ), ապա մոտեցավ Թմոզվի բերդին. տեսնելով վերջինիս անառիկ եւ ամուր լինելը՝ այնտեղից հեռացավ...» (Մելիքսեթե Բեկ, «Վրաց աղբյուրները Հա-

յաստանի եւ հայերի մասին», հատոր Ա, էջ 202): Այս շրջանի եւ հետագայի մասին կան տարբեր հիշատակություններ եւս այս հզոր ամրոցի մասին: Ժամանակի ընթացքում բերդը տարբեր առիթներով փոխանցվել է Թորելի, Մխարզոճելի-Չաքարյան, Շալիկաշվիլի, Զուաբուկիսճե եւ Ջաղելի իշխանական տոհմերին: 12-րդ դարի վերջերից, ի թիվս Գյուսիսային Հայաստանի այլ գավառների, Ջավախքն իր Թմկաբերդով ու Ախալքալաք (Նոր քաղաք) քաղաքով տրվել է հայ Չաքարյանների նախարարական տոհմին՝ որպես ժառանգական կալվածք: Թամար թագուհին Թմկաբերդը նվիրել է հայազգի ռազմական եւ քաղաքական գործիչ Սարգիս Թմոզվեցուն (Սարգիս Ա Վահրամյան), իսկ նրա եղբայր Չաքարիային՝ Գագը: 1578 թ. բերդը գավթվել է Օսմանյան կայսրության կողմից: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո անցել է Ռուսաստանին: Հայտնի է, որ բերդը խիստ տուժել է 1089, 1283 եւ 1319 թթ. տեղի ունեցած ավերիչ երկրաշարժերից: Ամրոցի հարեւանությամբ է Թմբուկ (Թմոզվի) գյուղը, որի գերեզմանատանը եղել են հայերեն արձանագրություններով բազմաթիվ տապանաքարեր ու խաչարձաններ, որոնցից այժմ գրեթե ոչինչ չի մնացել: Մեր հաջորդ կանգառը Թմկաբերդից ոչ շատ հեռու գտնվող մեկ այլ պատմական ու առեղծվածային հնավայր էր՝ Վարձիա-Վարձունիք քարանձավային համալիրը:

Չոհրաբ ԸՈՔՈՅԱԼ

Ջավախքի հնավայրերում

Ջավախք երկրամասը տարածվում է Կուր գետի աջակողմյան ամենաջրառատ Փարվանա գետի ավազանը ներառող եւ հյուսիսային, արեւելյան ու արեւմտյան կողմից ջրբաժան լեռնաշղթաներով սահմանազատված մոտ 2600 ք/կմ մակերեսով բարձրավանդակի վրա՝ ծովի մակարդակից 1700 մ մինչին բարձրությամբ: Ջավախքի ամենաբարձր կետը Մեծ Աբուլն է՝ 3301 մ բարձրությամբ: Երկրամասը հարուստ է ջրային պաշարներով՝ լճերով ու գետերով:

Ջավախքի վերաբերյալ հայտնի ամենահին գրավոր աղբյուրը Վանի թագավորության արքա Արգիշտի Ա-ի՝ Բ. ա. 8-րդ դարի փորագիր հիշատակությունում է՝ «Չաբախա» անվանաձեռով: Ջավախքի գրավոր ամենահին հիշատակությունը հանդիպում է 5-րդ դարի քերթողահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» մատյանում՝ կապված Մեծ Հայքի արքա Վաղարշակի (Բ. ա. 247-225 թթ.) անվան հետ: 11-12-րդ դարերում ապրած եւ ստեղծագործած հայ պատմիչ Մատթեոս Ռոմայեցին իր «Ժամանակագրություն» մատյանում (Երեւան, 1973 թ.) հիշատակում է Ջավախքն ու նրա Ախալքալաք քաղաքը: «Հայոց ՇԺԳ թվականին (5 մարտի 1064-4 մարտի 1065 թթ. ընթացքում) պարսից թագավոր սուլթան Աբասյանը՝ Տուղրիլ սուլթանի եղբայրը, որն իր եղբոր մահից հետո նստեց թագավորական գահին, զորակոչեց պարսիկներին եւ համայն հուժաստան աշխարհը՝ մինչեւ Սագաստան, եւ հսկայական զորքի գլուխն անցած... եկավ հասավ Հայաստան... Սուլթանը, իր հսկայական զորքով այնտեղից (Լոռեբերդ – 2. Ը.) հեռանալով, մտավ վրաց երկիրը եւ գազազած սրի քաշեց ու գերեվարեց նրանց: Առաջանալով՝ նա բանակեց Ջավախիս (իսկը Գուգարաց աշխարհի Ջավախքի մասին է – 2. Ը.) կոչվող գավառում եւ, կատաղի մարտ տալով, պաշարեց Ախալքալաքը, որը եւ գրոհով գրավեց: Նա անգթորեն սրի քաշեց ողջ քաղաքը...» (էջ 95-96): Սա Ախալքալաքի մասին առաջին հիշատակություններից է հայոց պատմագրության մեջ:



Նույն ասպատակության մասին հիշատակել է նաեւ Սամուել Անեցին. «...Էառ եւ զԱխալքաղաք...» (Սամուելի քահանայի Անեցոյ հաւաքմունք ի գրոյց պատմագրաց, Վաղարշապատ. 1893 թ., էջ 112): Ցավոք, մեր բոլոր պատմիչների մոտ ենք նման տխուր պատկերների հանդիպում: Հետագա ժամանակաշրջանում եւս, ինչպես ողջ տարածաշրջանը, Ջավախքն ու Ախալքալաքը նույնպես մշտապես եղել են ռազմական թատերաբեմ, որոշ ժամանակ ունեցել խաղաղ շրջան ու բարգավաճել: Զաղաքի անվան ծագման հետ կապված՝ Վարդան Արեւելցին նշել է. «Նոր քաղաք, զոր վիրք Ախալ քաղաք ասեն...» («Հաւաքումն Պատմութեան Վարդան Վարդապետի», Վենետիկ, 1862 թ., էջ 101): Ախալքալաքը հետագայում հիշատակվել է 12-րդ դարի վերջերից ի թիվս Գյուսիսային Հայաստանի այլ գավառների՝ վրաց Թամար թագուհու կողմից հայ Չաքարյաններին՝ որպես ժառանգական կալվածք փոխանցելու առթիվ: Չաքարյաններն այդ ժամանակ նստում էին Թմոզվի-Թմկաբերդ ամրոցում, եւ նրանց իշխանության օրոք Ախալքալաքն ուներ ինքնավարություն: Պատմական Մեծ Հայքի Գուգարք նահանգ-աշխարհի Վերին Ջավախք գավառի Ախալքալաք (Ախալքալաքի՝ թարգմանաբար՝ Նոր քաղաք) քաղաքն այսօր կանգուն է, կա, Վրաստանի Սամցխե-Ջավախք երկրամասի վարչական կենտրոնն է: Այստեղ եւս 1828-30-ական թթ. բնակություն են հաստատել Արեւմտյան Հա-

103

յաստակի տարբեր գավառներից, հիմնականում՝ Երզրումից գաղթած մեր հայրենակիցները: Ըստ 2014 թ. պաշտոնական տվյալների՝ քաղաքի բնակչության թիվը կազմում է 8295, որից 93.8 տոկոսը հայեր են: Աշխարհագրական տեսանկյունից տեղակայված է Ախալքալաքի սարավանդում՝ Փարվանա կամ Թափարավան գետի ավազանում: Ազգագրագետ, բանահավաք, հնագետ Երվանդ Լալայանն իր «Ջավախք» աշխատության մեջ այսպես է նկարագրում Ախալքալաքը. «Թափարաան եւ Ղըռխբուլաղ գետերը միախառնուելով մի պայտածեւ թերակղզի են ձեւացնում, որի վրայ գտնուում են Ախալքալաք քաղաքն ու բերդը: Բերդը կառուցուած է թերակղզու ծայրին, որի երեք կողմը ձգուում են բաւական ընդարձակ գառիվայրերի: Այս գառիվայրերում գտնուելիս է եղել հին քաղաքը, որ այժմ բոլորովին աներակ է: Կիսաւեր պարսպի հետքերը ցոյց են տալիս, որ քաղաքը պարսպապատ է եղել եւ միայն արեւելեան եւ արեւմտեան ճորերն մէջ բաց արած ճանապարհներով հաղորդակցուելիս է ունեցել գաւառի հետ: Տեղեկացնում է նաեւ. «...1882 թուին, երբ արքունական շինութիւնների համար քարեր էին կրում այդ աներակներից, պատահել են մի քարուկրեայ պատի, փորել են եւ գտել սրբատաշ քարերից շինած մի սալատակ եւ նրա տակ արդէն մի քանի գերեզմանաքարեր, խաչքարեր, մի քարէ աշտանակ, եկեղեցու դրան վերելի մի քար եւ այլն: Գտնուած քարերից շատերը ծածկուած են եղել հայերէն արձանագրութիւններով, որոնք վերաբերում են ԺԳ. ԺԴ. եւ ԺԵ դարերին: Դրանցից ամենահինն ունեցել է այսպիսի արձանագրութիւն. «Այս է հանգիստ Ներսէս (քահանայի՛ն) թվ. ՉԽԳԵ (1294)...»: Նրա տեղեկութեամբ՝ «Քաղաքի գրեթէ կենդրոնում գտնուում է Հայոց Սուրբ Խաչ եկեղեցին, որ 1856 թուին կառուցել է Կարապետ Եաղուբեանը՝ գլխավորապես իւր եւ մասամբ հասարակութեան դրամով»:



Քաղաքի ծայրամասում այժմ էլ պահպանվում են միջնադարյան հզոր ամրոցի ավերակները: 1637 թ. բերդաքաղաքը գրավում են օսմանյան թուրքերը, իսկ 1829 թ. այն անցնում է Ռուսական կայսրության տիրապետության տակ: Այդ ժամանակ էլ սկսում են հնադարյան ամրոցից քարեր տեղափոխել քաղաքում շինարարություն իրականացնելու համար: Այնուամենայնիվ, Ախալքալաքի ամրոցի ավերակները կան ու շատ բան են պատմում: Վերջին տարիներին այստեղ կանգնեցվել է Սասունցի Դավթի արձանը՝ «Հացն ու գինին, տեր կենդանին» մակագրությամբ: Ախալքալաքի շրջանի Կորիս գյուղի բնակիչներ Գետրոզ Բասենցյանի (այժմ բնակվում է Երեւանում), Յուրի Խորշիկյանի (ժամանակավոր բնակվում է Մոսկվայում) հետ, նրանց համագյուղացի Խաչատուր Թարգյանի մեքենայով եղանք Կուր գետի եւ նրա Փարվանա-Թափարավան վտակի հովիտ-կիրճերում, եղանք Ախալքալաքում, Խերթվիս գյուղում, որտեղ է համանուն միջնադարյան բերդը, անցանք Թմկաբերդի մոտով եւ հասանք Վարձիա-Վարձունիք քարանձավային վանական համալիր: Ախալքալաքի ամրոցի աշտարակներն ու դռները կառուցել է Վիրա-արխագաց Բագրատ Գ Բագրատունի (975-1014 թթ.) թագավորը 1008-1012 թթ., իսկ Բագրատ ԴՎԼի (1027-1074 թթ.) օրոք՝ 1044-1047 թթ., կառուցվեցին քաղաքի պարիսպները: «Սա շինեաց գպարիսպն Ախալքալաքի եւ զի մայր Նորա Մարիամ դուստր Եր Սենեբերիմա Հայոց արքայի...», – գրել է Ջուանշեր Ջուանշերիանին (11-րդ դար) «Քարթլիս ցխովրեբա» պատմական երկերի ժողովածուում, էջ՝ 112: Սենեբերիմ Արծրունին՝ Աբուսաիլ-Համագասպի որդին, Վասպուրականի վերջին թագավորն էր: Իշխել է 1003-1021 թթ.: Ըստ հայ պատմիչ Անանուն Արծրունու՝

1023 թ. Սենեբերիմն իր տարածքները հանձնել է Բյուզանդիային (կայսր՝ Բարսեղ 2-րդ Բուլղարասպան) եւ 14 հազարանոց բանակով, իր ընտանիքով տեղափոխվել է Սեբաստիա: Ըստ ծանր պայմանագրի՝ Բյուզանդական կայսրությանը զիջել է Վասպուրականը (8 քաղաք, 72 բերդ, 4 հազար գյուղ) եւ 1021 թ. իր արքունիքով, մերձավորներով ու զորքով (մոտ 70-80 հազար մարդ) գաղթել Սեբաստիա, որը ճանաչվել է Արծրունիների ժառանգական տիրույթը: Սենեբերիմ-Յովհաննեսն այնտեղ իշխել է մագիստրոսի կոչումով՝ հավանաբար, ունենալով կուսակալի իրավունքներ: Յետագայում հիմնել է Արաբկիր եւ Ակն քաղաքները: Մահացել է 1026 թ.: Նրա դուստրը՝ Մարիամը, որը Ափղազաց եւ Վրաց թագավոր Բագրատ 3-րդի կինն էր, Մարմաշենի վանքի արձանագրությունում հիշատակված է «Ափղազաց եւ հայոց թագուհի»:

Ախալքալաքն այնուհետեւ որպես վարչական կենտրոն փոխարինել է Ծունդա քաղաքին (այժմ կոչում էին Քաջատուն, այժմ՝ Սուլդա գյուղ): Երջանկահիշատակ հուշարձանագետ Սամվել Կարապետյանն իր «Ջավախք» գրքում Ախալքալաքի մասին գրում է. «...Դարեր շարունակ եւ այժմ էլ Ախալքալաքը, շնորհիվ իր բարենպաստ աշխարհագրական դիրքի, եղել է եւ է Ջավախքի կենտրոնը բոլոր առումներով (վարչաքաղաքական, տնտեսական, մշակութային եւ այլն): Ընդուն է ներկայումս սուկ երկամսուս շրջանի կենտրոնն է, բայց դարձյալ մնում է իբրեւ երկարամասի գլխավոր եւ ամենամարդաշատ բնակավայրը: Գտնվում է ծովի մակերեսույթից 1690 մ բարձրության վրա...»: Ախալքալաքի ամրոց-բերդաքաղաքը նույն բարձրության վրա է՝ Կուրի աջակողմյան ամենաշրառատ Փարվանա վտակի եւ նրան միացող Քառասնակի (Ղըռխբուլաղ) միջեւ ընկած հրվանդան-սարահարթում է: Ունի մոտ 700 մ երկարություն եւ 120-130 մ լայնություն: Ամրոցի միջնաբերդը տեղակայված է եղել ամրոցաբնակավայրի հարավարեւելյան ծայրին: Այս հատվածում՝ գլխավոր բուրգերից մեկի հարեւանությամբ են 18-րդ դարում կառուցված թուրքական մզկիթը, որը պահպանվել է, եւ իջեւանատան շենքը: Ամրոցի տարածքում են նաեւ միջնադարյան հայկական խաչածեղ-գմբեթավոր եկեղեցու հիմքերը (16-14 մ չափերով), որոնք գտնվել են պեղումների ընթացքում: Ըստ Ս. Կարապետյանի՝ նմանատիպ եկեղեցիներ Ջավախքի տարածքում էլի կան եւ կառուցվել են 10-11-րդ դարերում: Բնական է եթե քաղաքը եղել է 10-րդ դարում, հնարավոր է՝ ավելի վաղ շրջաններում, ուրեմն ունեցել է իր սրբատուն-եկեղեցին:

Այցի ընթացքում, երբ Յուրայի հետ ամրոցի արեւելյան կողմից մտանք ներս, մեզ դիմավորեցին 6 գեղեցիկ կատվածագեր: Շրջեցինք հնավայրի տարածքում: Ամրոցի կիսաբանդ պարիսպները ձգվում են Փարվանա գետի կիրճի ձախակողմյան ափով: Ներքեւում Փարվանայի գեղատեսիլ ժապավենն է՝ ափին ծառուղին: Ամրոցից գեղեցիկ տեսարան է բացվում նաեւ դեպի Աբուլ սար, որի գլխին այդ օրերին Նոր ձյուն էր տեղացել: Ամրոցի հյուսիսարեւելյան աշտարակը պահպանվել է ողջ բարձրությամբ: Մտնում ենք ներս. պահպանվել են փոքր պատուհանները, որտեղից բերդապահ զինվորները նետեր էին արձակում թշնամու զինվորների վրա, հետագայում կրակ բացում հրացաններից: 1000 եւ ավելի տարիներ ունեցող ամրոցն այժմ կարելովում է միայն զբոսաշրջության առումով: Վերջացնելով տարածքի ուսումնասիրությունը՝ շարունակում ենք ճանապարհը դեպի Վարձիա:

Չոիրաբ ԸՈՔՈՅԱԼ

Կանգ առեք, ու այլևս մի կտորրեք իրար, մեր բոլոր ասածները հիմարություն դուրս եկան: Վար առեք ժողովրդին անդամահատության սեղանից եւ բավական է փորձեր կատարեք նրա վրա: Չեկավ, բան դուրս չեկավ ձեր փորձերից...

Ու եթե հին աշխարհը փոխվեց, այդ միայն այլանդակվեց, անճանաչելի դարձավ: Եվ այդ՝ այնքան, որ անգամ անհնարին է հին դարձնել:

Լեռ ԿԱՍՍԱՐ, 1962թ., ամսիպ

Յիրափ ճի՛շտ է, որ տգիտութիւնն ալ տեսակ մը գիտութիւն է...

Յակոբ ՊԱՐՈՆՅԱՆ

- ◆Մեր դժբախտությունն այն չէ, որ աշխարհում կան թուրքեր, այլ այն, որ կան թուրքամտան հայեր:
- ◆Եվ ամեն մեկը, որ տգիտություն եւ վատություն ունեցավ իրենից դուրս փնտրելու աղետի պատճառները, կրկնեց հիմարություններ միայն:
- ◆Հաղթականը կուսումնասիրի իր հաղթանակի պատճառները՝ վաղը ևս հաղթանակելու համար, պարտվածը կանդադարանա իր պարտության պատճառներին՝ վաղը նրանցից խուսափելու նպատակով:
- ◆Այլ կերպ հայությունը կմա մեկն այն դժբախտ ժողովուրդներից, որոնք գոյություն ունեն, բայց չեն ապրում, որոնք, աշխարհում են, բայց աշխարհից չեն:

Քարեգին ՆՄԵՅԷ

Քարանձավային քաղաք-ամրոցը՝ Թմկաբերդի հարեւանությամբ



2022 թ. հնարավորություն ունեցա 2 անգամ այցելել Ջավախք եւ տեսնել Թմկա բերդն ու Փարվանա լիճը, այցելել Տեղյակի տուն-թանգարան: Ջավախք աշխարհի գեղատեսիլ բնությունը շատ գերեց ինձ հատկապես գարնանը՝ մայիսին:

Հոկտեմբերի վերջին մի քանի օրով Ջավախքի Ախալքալաքի շրջանի Կորիս գյուղում էի. տեղի ունեցավ հայկական այս պատմական գյուղի Սուրբ Ստեփանոս վերակառուցված սրբատան բացումն ու օծումը: Եվ այդ օրերին ունեցա ժամանակ ու հնարավորություն շրջել Ջավախքի՝ Փարվանա (Թափարվան) գետի ավազանի հնավայրերում, որոնք առանձնակի հմայք են տալիս գեղատեսիլ այս տարածքին: Փարվանան Կրաստանի Ջավախքի բարձրավանդակի հյուսիսային հատվածում է՝ սկիզբ է առնում Փարվանա լճից՝ ծովի մակարդակից 2073 մ բարձրությունից եւ աչ կողմից թափվում Կուր գետը: Մոտ 75 կմ երկարությամբ այս գետը, դուրս գալով մայր լճից, սկզբնապես հոսում է դեպի հարավ, ապա թեքվում հյուսիս եւ 2 մասի բաժանում Ախալքալաք քաղաքը: Խերթվիս գյուղի մոտ միախառնվում է Կուրին: Փարվանան վարարում է գարնանը՝ հիմնականում ձնհալից եւ անձրեւաջրերից: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով: Գետի վրա կառուցվել է հիդրոէլեկտրակայան: Մինչ Կուրին միանալը Փարվանայի աչ կողմից նրան է միանում Արագվի գետը: Ախալքալաքի շրջանի Կորիս գյուղի բնակիչներ Գետրոզ Բասենյանի (այժմ բնակվում է Երեւանում), Յուրի Խորշիկյանի (ժամանակավոր բնակվում է Մոսկվայում) հետ նրանց համագյուղացի Խաչատուր Թարգյանի ավտոմեքենայով եղանք Կուր գետի եւ նրա Փարվանա-Թափարվան վտակի հովիտ-կիրճերում, Ախալքալաքում, Խերթվիս գյուղում, որտեղ է համանուն միջնադարյան բերդը, անցանք Թմկաբերդի մոտով եւ հասանք Վարձիա-Վարձունիք քարանձավային վանական համալիր:

Վարձիա, Վարձունիք քարանձավային վանական համալիրը դեռեւս հեռվից հմայում է ցանկացած մարդու՝ իր առեղծվածային դիրքով ու կառույցներով: Բազմաթիվ քարայրներ գրեթե ուղղաձիգ ժայռի մեջ են, որոնք միմյանց միանում են հնդդարում ու ներկա ժամանակներում բացված ուղիներով, աստիճաններով: Կրաստանի Սամցխե-Ջավախքի մարզում է, Ասպինձայի շրջանում, Կուր գետի ձախափնյա Էրուշեթի կոչվող սարի տուֆային պատի երկայնքով՝ մինչեւ 900 մետր: Ժամանակին այստեղ փորվել են մոտ 600 այրեր, որոնք գործել են որպես եկեղեցիներ, ժամատներ, զորանոցներ, բաղնիքներ, գրադարաններ, բնակելի սենյակներ եւ այլն: Համալիրի տաղավարները ժայռի մեջ խորանում են մոտ 50 մ եւ բարձրանում վերել՝ մինչեւ ութ հարկ: Պահպանվել են գաղտնուղիներ, որոնք քարայր-տաղավարները կապում են միմյանց, ինչպես նաեւ պահպանվել են ջրաօժի մատրոդներ: Վանական համալիրի կենտրոնական մասում է քրիստոնեական գլխավոր տաճարը՝ նվիրված Աստվածամորը: Այս տաճարը նույնպես ժայռի մեջ է փորված: 1553 թ. կողոպտվել է պարսից Թահմազ շահի կողմից: Երվանդ Լալայանի տեղեկացմամբ՝ համալիրում մի փոքր մատուռի մեջ թաղված է վրաց Կոստանդին Ա թագավորը (1407-1414): Կա կարծիք, որ այդ տապանը Թամար թագուհուն է, սակայն, գիտնեք Թամարը թաղված է Գելադի վանքում: Լալայանը բավական ընդարձակ ներկայացնում է նաեւ վանական այս սրբատան ճարտարապետությունը: Պատերին կան վրաց Գեորգի 3-րդ թագավորի (1156-1184 թթ.) եւ Թամար թագուհու (1184-1212 թթ.) դիմանկարները, այլ նկարներ, որոնք արվել են 1180-ական թթ.: Եկեղեցուց քիչ ներքե կառուցված է զանգակատունը:

Աշխարհիկ շինություններից նկարագրում է թագուհու բնակարանը, խորհրդարանը կամ դատարանը: Ըստ նրա՝ 19-րդ դարում այս եկեղեցի հիմնականում այցելել են կանայք՝ արդթելու հատկապես ծննդաբերության, հիվանդության, վշտի ժամանակ եւ մատաղ են խոստացել:

Նույն եկեղեցու մասին ներկայացվում է մի ավանդույթ՝ «Վարգիու շինվիլը» վերնագրով, որը Ե. Լալայանին պատմել է գյուրնեցի գյուղացի, որը նրան առաջնորդել է Վարձիա: Ըստ այդ ավանդույթի՝ Վանսգոմի վանքում (Կարսի տարածք) մի ճգնավոր է եղել: Այդ ժամանակ շահի աղջիկը հիվանդացել է, եւ ոչ մի բժիշկ չի կարողացել բուժել նրան: Շահի խորհրդական-գուշակները հուշում են, որ միայն նշված ճգնավորը կբուժի աղջկան: Սակայն մահմեդական շահը դեմ էր, որ իր աղջկան քրիստոնյա ճգնավորը բուժեր: Բայց գնալով աղջկա վիճակը ծանրանում է, եւ նա իր չարվատարին (ծառա-նաժիշտ) հրամայում է իրեն տանել Վանսգոմ: Շահից գաղտնի չարվատարն աղջկան բերում է Վանսգոմ, որտեղ ճգնավորի պահանջով մկրտվում է քրիստոնյա, բուժվում եւ մնում է Թմկաբերդում: Այնուհետեւ, մի օր այս աղջիկը վիրավոր արագիլ-լագլակ է գտնում եւ բուժում նրան: Արագիլը երախտապարտ է լինում՝ աղջկան ոսկի, արծաթ ու երկաթ է բերում: Աղջիկն սկզբում ոչխար է գնում, կամաց-կամաց հարստանում եւ շինել է տալիս Վարձիայի վանքը:

Ըստ վրացական պատմագրության՝ վանքային համալիրը կառուցվել է 1156-1205 թթ., Գեորգի 3-րդ թագավորի ու նրա դստեր՝ Թամար թագուհու օրոք, եւ որպես ամրոց-բնակավայր՝ Կուր գետի հովիտը հարավարեւմտյան կողմից փակել է պարսիկների ու թուրքերի ներխուժումից: Այն ժամանակներում համալիրի տաղավարները թաքցված էին ժայռով, եւ միայն վերնամասից միմյանց հետ կապված էին երեք ստորգետնյա անցումներով, որոնց միջով մարտական ջոկատները հանկարծակի հայտնվելով՝ խուճապի էին մատնում թշնամուն: 1193-1195 թթ. թուրք-սելջուկների հետ պատերազմի ժամանակ Թամար թագուհին իր արքունիքով գտնվել է Վարձիայում: Տարածքի բնակչության մեջ պահպանվել է մի ավանդույթ, որ ամրոց-բնակավայր-վանական համալիրը վրաց լեզվով Վարգիա է կոչվում: Թուրքերի կամ պարսիկների դեմ վրաց-հայկական բանակը հաղթանակ է տանում: Չորսամյա մատարի քրոջ որդին էլ է մասնակցել մարտին եւ ավարտից հետո չի երեւցել: Հրամանատարը կանչել է նրան: Երիտասարդը ներքեից ձայնել է վրացերեն. «Վար Զիա-Ներքեում եմ, քեռի»: Ինձ ուղեկցող Յուրան պատմեց այս ավանդույթը: Վարձիայն, սակայն, հայկական աղբյուրներում հիշատակվել է դեռեւս 5-րդ դարում՝ Վարձիա, Վարձունիք անունով: Դեռեւս 4-րդ դարի սկզբին, երբ Հայաստանում, այնուհետեւ Կրաստանում պետականորեն ընդունում են քրիստոնեությունը, Գուգարաց աշխարհը, որի կազմում էր Ջավախքը, հայկական թագավորության սահմանակալ ուժեղ վարչամիավորներից՝ ըղեշխություններից էր, որի տիրակալը կոչվել է «Սյուն ըղեշխ»: Նա այն 16 մեծամեծների թվում էր, որոնք Տրդատ 3-րդ Մեծի հրամանով Գրիգորին՝ հայոց ապագա առաջին կաթողիկոսին ուղեկցել են Կեսարիա՝ այնտեղ վերջինիս ձեռնադրության նպատակով: Իր հերթին՝ ըղեշխն ուներ ենթակա վասալներ, որոնց մեջ առանձնանում էին Ջավախքի Վարձավունի նախարարները, ովքեր 3-րդ, 4-րդ դդ. պահպանում էին իրենց ներքին ինքնուրույնությունը եւ հայտնի «Գահնամակում» 70 նախարարների մեջ եղել են 23-րդը:

Ըստ Դեռնոյ Ալիշանի՝ Ջավախքի մեջ մտնող այս երկրամասը հայտնի է եղել նաեւ Վարձունիք եւ Վերձառունիք անուններով: Այնտեղ, ըստ ավանդության, գտնվել է սուրբ Մեսրոպի ձեռքով դրված Վարձունյաց խաչը: Այդ մասին հիշատակված է Վարդան Բարձրբերդոցի պատմիչի գրի առած մի ավանդապատումում, որի համաձայն՝ «Ի Դարավանից տարան գիպաչն, որ յանուն Սուրբ Աստուածածին, որ արդ Վարձիոյ կոչի՝ յայնժամ ճոնեացն կոչիլ: Եւ տարաւ զնա Սարգիս ճոնեացն ի գաղութ յերեսաց այլազգեաց, ուր արար սքանչելիս ձեռք Տիմոթ վարդապետին-զկին Դեմետրեայ արքային վրաց յուրկուսենէ առողջ արարեալ ամենեւին, վասն որոյ եւ առին ի Հայոց եւ է սրբոյն Մեսրոպայ արինեալ եւ կամ Բարսղի սրբոյ ճոնին եւ ունի գիր հայերեն յաչ թենս»: Երվանդ Լալայանն իր «Ջավախք» աշխատությունում մի քանի անգամ է անդրադարձել այս հնավայրին՝ մեջ բերելով նաեւ ժողովրդական ավանդույթներ: Ելնելով Վարդան Բարձրբերդոցի

120

պատմիչի հիշատակությունից՝ գրել է, որ Սուրբ Աստվածածնի տված դրախտի ծառի ճյուղից շինված ճոնեաց Սուրբ խաչն ապահովության համար է 7-րդ դարում Վարձիա տեղափոխվել: Զետեաբար, այս հնավայրն ավելի հին պատմություն ունի, կառուցվել է 7-րդ դարից առաջ, հավանաբար, հայ իշխանի կողմից: Այս հնավայրի մասին գրել է ևս եւ 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը:

Նորավանքի կառուցման ժամանակ, ինչպես գրում է պատմիչը. «Նաեւ կռիվ է բարձրանում Սուրբ Խաչի համար: Եվ երկու եպիսկոպոսներն էլ Լիպարիտի ու իր Ելիկում որդու հետ գնում են Դվին, Իվանե աթաբեկի մոտ դատաստանի: Իվանեն էլ նստեցնելով իր մեծամեծներին՝ Բուպաքին ու գավառապետին, Իվան դպելին, Մեմնա Ջաղելին, մեծ նախարարապետին, որ եկել էր Վրաստանի թագավորությունից, Վարձեի վանահորը...» («Սյունիքի պատմություն», 1986 թ., Երեւան, էջ՝ 292-293): Սա խոսում է այն մասին, որ Վարձիան-Վարձեն 13-րդ դարում ունեցել է կարեւոր դիրք հայ-վրացական հարաբերություններում, եւ տեղի վանահայրը նույնպես հրավիրվել է այս դատաստանին: Այս հնավայրին իր «Չավախք» գրքում առավել հանգամանալից է անդրադարձել երջանակահիշատակ հուշարձանագետ Սամվել Կարապետյանը: 12-13-րդ դարերում, երբ հայ-վրացական միացյալ զորքերը Չաքարյան իշխանների հրամանատարությամբ մարտի էին գնում, Աստոծ օրհնությունն էին ստանում Վարձիայի վանքում: «Աղոթելով Վարձիի Աստվածածնի առաջ (թագավորն) օրհնեց արշավանքը եւ ուղարկեց Պարսկաստան: Տվեց դրոշակը Չաքարիա ամիրասպասալարին, եւ նրանք (զորքերը) գնացին Պարսկաստան...»: Սա մեջ բերվել է Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին» գրքից (հ. Բ, էջ 23): Ս. Կարապետյանի հիշատակած արձանագրություններից մեկը, որ վրաց մետրոպոլիտն է գտնվում է Վարձուկայց վանական համալիրի գլխավոր տաճարին կից գավթի դռան վերեւը եւ ունի հետեւյալ գրությունը. «Ով ամենասուրբ Վարձուկեի Աստվածածնի, փառավորի երկու տերություններում այս մեծ խանի շինող տեր Իվանեին, արժանանա արքայությանը, եւ նրա մեղքերն Աստված թողնի, Ամեն»:

1283 թ. երկրաշարժի ժամանակ 15 մ հաստությամբ ժայռաբեկորը պոկվել եւ գլորվել է Կուր գետը: Համալիրի մեծ մասը ավերվել է մեծ վնասներ է կրել, տաղավարների մեծամասնությունը բացվել է եւ դարձել տեսանելի: Դրանից հետո Վարձիան կորցրել է իր պաշտպանական նշանակությունը: 16-րդ դարի վերջերին Վարձիան գրավել են թուրքերը, որոնք դաժան հաշվեհարդար են տեսել վանականների հետ եւ նրանց կենդանի այրել գլխավոր տաճարում: Ե. Լալայանը նշում է՝ մինչեւ 19-րդ դարակեսը Վարձիան եղել է անխնամ, որտեղ ոչխար են պահել: Սակայն մի հույն սարկավագ եւ վրացի վարդապետ մաքրել են տարածքը եւ դարձրել ուխտատեղի, որը ծառայել է հայ, վրաց եւ հույն ուխտավորներին: Իսկ Ախալքալաք քաղաքը հոգացել է սրբավայրի պահպանության համար գումարը: 1938 թ. Վարձիան հայտարարվել էր որպես թանգարան-արգելոց: Այժմ փորձեր են արվում Վարձիայում վերանվանել վանականությունը, եւ այն համարվում է Վրաստանի զբոսաշրջության գլխավոր վայրերից մեկը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության թեկնածու է:

Վերադարձանք ամեղծվածային ու պատմական այս վայրից, որն իր մեջ բազում լեգենդ ու գաղտնիք է թաքցրել: Կանգ առանք նաեւ Թմկաբերդի տակ՝ Կուրի ափին եւ մտովի տեղափոխվեցինք միջնադար, երբ այս սարերի վրա հայոց իշխանը կռիվ էր տալիս ասպատակողների դեմ ու հաղթում...

ԱՆԳԱՄ ԶԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Ե ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԼԻՆԻ

Հայոց ցեղասպանության ճանաչումը՝ Հայաստանի եւ սփյուռքի համար

Պատմական հիշողությունն ազգերի եւ ժողովուրդների ինքնության ձեւավորման կարեւորագույն տարրերից է: Անցյալի մասին հիշողությունը թույլ է տալիս կապել անցյալը ներկային եւ նախանշել ապագայի զարգացման տեսլականը: Լինում են պատմական իրադարձություններ, որոնք ուժեղ ազդեցություն են ունենում ազգի ու ժողովրդի վրա՝ միավորելով հավաքական ամբողջությունը: Հայերիս համար, ցավոք, նման իրադարձություններից է 1915 թ. Հայոց ցեղասպանությունը, իրադարձություն, որի հետեւանքներն ու խնդիրներն առայսօր առնչվում են ժամանակակիցներին: Օրինաչափորեն հարց է առաջանում, թե բավարար է արդյոք ցեղասպանության հարցը մեզ միավորելու եւ ապագայի տեսլականը մշակելու համար:


Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հարություն Մարությանն առաջ է քաշում արժանապատիվ հիշողության գաղափարը, երբ ցեղասպանության մասին այսօրվա երիտասարդները խոսելիս ոչ միայն կտխրեն, այլեւ կհպարտանան, որ իրենց պապերը կարողացել են վերապրել: «Վերապրելը բարոյական մեծ ներուժ պարունակող երեւոյթ է: Այն, որ տատիկս կարողացել է Վանից հասնել այստեղ, ստեղծել ընտանիք, ունենալ չորս զավակ, մեծ հերոսություն է: Վանը գոնե պայքարել եւ հաղթել էր, իսկ այն վայրերում, որտեղ իրավիճակն ավելի վատ էր, քաջորով են անցել, դաժանություններ են տեսել, կարողացել են հաղթահարել եւ վերապրել: Դա պետք է զննատել եւ մաքառելով վերապրել», – «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի հետ զրույցում նշեց նա: Ի վերջո, ինչ ենք հասկանում ցեղասպանությունն ասելով՝ միայն զոհվելը, թե նաեւ վերապրելը:

Մարությանի համար՝ որպես ազգագրագետի, հետաքրքիր են եղել հիշողության պահպանման հետ կապված մտքերն ու առաջարկները, որոնք բարձրաձայնվել են «Ապագա հայկականը» առաջին համահայկական քաղաքացիական համաժողովի քննարկումների ժամանակ:

(Ազգագրագետ Հարություն Մարությանը «Ապագա հայկականը» նախաձեռնության «Պատմական պատասխանատվություն» փորձագիտական հանձնախմբի անդամ է):

«Այդտեղ տեսնում ենք շուրջ 200 հոգու կոլեկտիվ միտքը, հայկական ստեղծագործ մտքի դրսեւորումները: Որպես հետազոտող՝ կցանկանայի ուսումնասիրել այդ տեքստերը: Վստահ եմ, որ կան լավ առաջարկություններ, լավ դիտարկումներ, որոնց վրա կարելի է աշխատել», – ասաց նա:

Չրուցակցիս խոսքով՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը շատ հաճախ մենք դիտարկում ենք Հայաստանի տեսանկյունից, մինչդեռ կա նաեւ սփյուռքը, եւ մենք պետք է հաշվի առնենք այդ հանգամանքը եւս: Սփյուռքում բնակվող տարբեր երկրների հայազգի քաղաքացիների համար ճանաչման հարցը շատ կարեւոր է: Նրանք այդ երկրների քաղաքացիներն են, եւ, երբ այդ պետությունների կառավարություններն ու խորհրդարանները ճանաչում, դատապարտում եւ ընդունում են պատմական ճշմարտությունը, բոլորովին այլ իրողություն է ստեղծվում օտարախաղաղական հայերի համար: Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս, որ սփյուռքահայերն ավելի ակտիվ գործեն: Օրինակ՝ ԱՄՆ-ի պարագայում, երբ Հայոց ցեղասպանությունը ճանաչված էր նախագահի մակարդակով, Մարությանի խորին համոզմամբ՝ Վա-



շինգոտնում Հայոց ցեղասպանության թանգարանի բացման հետ կապված դժվարություններից եւ չհաջողելու պատճառներից մեկն այն էր, որ պետությունը պաշտոնապես չէր ճանաչել:

Մեքսիկայի Սենատը փետրվարի 8-ին փաստաթուղթ ընդունեց, որով ճանաչեց Հայոց ցեղասպանությունը՝ վկայակոչելով մարդու համընդհանուր իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը: Մեքսիկայի խորհրդարանը նաեւ հորդորեց արտաքին հարաբերությունների քարտուղարությանը՝ աջակցել Մեքսիկայի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչմանը, ինչը ենթադրում է, որ այն դեռ երկրի նախագահի մակարդակով ճանաչման անհրաժեշտություն ունի: Ի դեպ, Թուրքիան առիթը բաց չի թողել դատապարտելու Մեքսիկայի խորհրդարանի կողմից պատմական անհերքելի իրողության ճանաչումը՝ այն անվանելով «պատմությունը վերաշարադրելու փորձ՝ քաղաքական շարժառիթներով»:

Պատասխանելով այն հարցին, թե ինչով է կարեւոր Մեքսիկայի Սենատի կողմից ճանաչման հանգամանքը, Մարությանը նկատեց, որ այդ երկրում ճանաչված է այսպես ասած՝ «խոջալուն»: «Երբ օտարերկրյա պատվիրակություններն այցելում են հուշահամալիր, այն սկսում են Սումգայիթին նկիրված խաչքարի մոտից, այսինքն՝ ներկայանալով եւ անցյալի հետ: Ներկայում Ադրբեջանը փորձում է հարցերը լուծել նույն ձեւով, ինչպես ավելի քան հարյուր տարի առաջ թուրքերն են արել, այն թուրքերը, որոնք կանգնած են իրենց պետականության ստեղծման հիմքում: Շեշտում եմ, որ կողողը նկիրված է մի երեւոյթի, որը տեղ է գտել հարյուր տարի առաջ, միաժամանակ խաչքարը ցույց է տալիս կապն այն իրադարձությունների հետ, որոնք տեղի են ունեցել դրանից հետո՝ 1918 թ. Բաքվի, 1920 թ. Շուշի կոտորածները, հետո արդեն 1988-1990 թթ. Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի (Գանձակ) եւ այլն», – մանրամասնեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենը՝ մեկ անգամ եւս կարեւորելով ժամանակների միջեւ կապը ցույց տալու անհրաժեշտությունը: Նկատենք, որ Արցախյան երկրորդ պա-

Պատմական հիշողության դասերը եւ ներկան



Կեղծ թեզեր՝ կամայական եւ կեղծ մեկնաբանությունների հիմքի վրա

Ժողովուրդը, որը պատմական հիշողություն չունի, չի կարող ապագա ունենալ: Սա Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի արտահայտած միտքն է Կոլգոզրադում երիտասարդական ու հայրենասիրական կազմակերպությունների հետ հանդիպման ժամանակ: Եթե ժողովուրդը չգիտի իր անցյալը, կկորցնի այն ամենը, ինչը պետք է թանկ գնահատի, ինչի հիմքի վրա նույն այդ ժողովուրդը պետք է զարգանա: Ապագային չես կարող նայել առանց իմանալու անցյալը, «առանց հարազատ հողի ընկալման, առանց նախնիներիդ հանդեպ երախտագիտության»: ՌԴ նախագահը մեկ այլ առիթով հայտարարել է, որ Ռուսաստանը պետք է ինքնաբերական պատմական հիշողությունը, ինչպես նաև չթուլալիքի որեւէ մեկին՝ խեղաթուրելու դրա դերը նազիզմի դեմ ընդհանուր հաղթանակի մեջ... Իմաստուն մտքեր են՝ կասեր յուրաքանչյուրը՝ լսելով ՌԴ-ի ղեկավարին: Բայց դրանք ունեն մեկ թերություն՝ վերաբերում են միայն ռուս ժողովրդին, եթե դատելու լինենք ըստ այլ երկրների ու ժողովուրդների նկատմամբ Մոսկվայի վարած քաղաքականության: Այլ ժողովուրդների պատմական հիշողությունը շատ դեպքում խոչընդոտ է Ռուսաստանի համար, եւ նա ձգտում է մոռացության մատնել այն հնարավոր բոլոր միջոցներով: Ասվածի վկայությունն են նաև ՌԴ արտաքին գոր-

ծերի նախարար Սերգեյ Լավրովի՝ «Ռուսիա 24» հեռուստաալիքին եւ «ՌԻԱ Նովոստի» գործակալությանը տված հարցազրույցում հնչեցված մտքերը: Մեջբերենք մի հատված այդ հարցազրույցից. «Երբ Հայաստանն ու Ադրբեջանը շարունակեն ուղիներ որոնել Կովկասում իրավիճակի կայունացման համար, ՀԱՊԿ-ն նույնպես պատրաստ է օգնել: 2022 թ. սեպտեմբերին բռնության բռնկումից հետո, երբ երկու կողմից գոհվեց մոտ 300 մարդ, մենք ստացանք Երեւանի խնդրանքը: Կազմակերպության գլխավոր քարտուղարը փորձագետների հետ մեկնեց սահման եւ բերեց ՀԱՊԿ առաջնություն» Հայաստանի այն մասում տեղակայման ծրագիրը, որը սահմանակից է Ադրբեջանի Հանրապետությանը: Այդ ծրագիրը բավական վաղուց էր պատրաստ, սակայն հայկական կողմը մեզ չէր շտապեցնում: Երեւանյան գագաթնաժողովում ավարտեցինք համապատասխան որոշման տեքստը, սակայն հայ գործընկերներին ասացին, որ իրենց պետք է այն, եթե միայն դրանում կտրականապես դատապարտվում են Ադրբեջանի գործողությունները: Ոչ բոլորն էին պատրաստ դրան: Ոչ միայն այն պատճառով, որ պատրաստ էին ինչ-որ մեկին պաշտպանել կամ չպաշտպանել: Ղարաբաղյան պատերազմի պատմությունը տասնամյակների խորքն է գնում: Հայերը երկար տարիներ օկուպացրել էին Ադրբեջանի շուրջ 7 շրջանները: Ռուսաստանն առաջարկեց բազմաթիվ տարբերակներ: Դեռ հայկական նախորդ ղեկավարությունն էր ոչ շատ դրական ընդունում այն՝ ցանկանալով պահել տարածքները, որոնց երբեք չի հավակնել: Հուսահատվելով հարցը լուծել քաղաքական ճանապարհով՝ Ադրբեջանը վերադարձրեց իր հողերը: Հիմա Հայաստանը, Ադրբեջանը եւ Եվրամիությունը փաստաթուղթ են ստորագրել խաղաղ պայմանագիր ստորագրելու պատրաստակամության մասին այն պայմաններում, որոնք նշված են 1991 թ. Ալմա Աթայի հռչակագրով: Հիմա մեզ դժվար է կողմնորոշվել հետագա քայլերի հարցում: Այդ փաստաթուղթում ասված է. նորանկախ պետությունների միջև սահմանն անցնում է Խորհրդային Միության փլուզման հանրապետությունների վարչական սահմաններով, ներառյալ՝ հայկական ու ադրբեջանականը: Վերջինիս կազմում էր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Իրավիճակը բազմաշերտ է: Կարելու ձեռքբերում եմ համարում այն փաստը, որ ՀԱՊԿ-ն ոչ հասարակ իրավիճակում խաղաղապահ գործողության տեղակայման ծրագիր է մշակել: Այդ առաջարկը մինչ օրս «սեղանի վրա» է: Եթե հայ դաշնակիցներն ու ընկերներն առաջվա պես հետաքրքրված են դրանով, այն կարող է տեղակայվել մեկ-երկու օրվա ընթացքում: Իհարկե, այն բանից հետո, երբ Հայաստանը ՀԱՊԿ անդամ պետությունների խորհրդարանների կոմիտեների նախագահների երկրորդ խորհր-

315

130 ԱՆԳԱՏ ԳԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԷ Ե ԱՐԺԱՆԱՊՍԻՎ ԼԻՆԻ

տերազմի ընթացքում նույնպես տեղ են գտել ցեղասպանության տարրեր: Միայն հայ լինելու հանգամանքով պայմանավորված, այսինքն՝ Եթե ինչ պատկանելության հիմքով գինիներ, խաղող բնակչության, իսկ մինչ օրս նաեւ գերիների նկատմամբ անմարդկային դաժանություն է ցուցաբերվում: 3. Մարտության խոսքով՝ Մեքսիկայի պարագայում խորհրդարանի կողմից ճանաչումը գործընթացի մի հատվածն է: Վերջերս Հայաստանում էր ՀՀ-ում Մեքսիկայի դեսպան Էդուարդո Վիլյեգաս Մեխիասը տիկնոջ հետ (ստատավայրը՝ Մոսկվա), նրանք ՀՀ-ում Մեքսիկայի պատվավոր հյուպատոս Նիկոլայ Կոստանոյանի ուղեկցությամբ այցելել են նաև Հայոց ցեղասպանության հուշահամալիր եւ թանգարան՝ ծանոթանալով մշտական եւ ժամանակավոր ցուցադրություններին: Դեսպանի տիկնոջ թանգարանում շրջայնի ժամանակ նշել է, որ դպրոցում Հայոց ցեղասպանությանը նվիրված դասաժամ է ունեցել, եւ իր համար շատ կարեւոր է, որ հնարավորություն է ընձեռվել այցելել թանգարան եւ ամենվեց պատմությանը: Ի դեպ, Մեքսիկայի դեսպանը հիվազ տարի աշխատել է նախագահի աշխատակազմում եւ պատմական հիշողության հարցերի պատասխանատուն է եղել: Չրուցակիցս նշեց, որ երբ հետաքրքրվել է, թե ինչ է այն եկթաղում, դեսպանը պարզաբանել է, որ զբաղվել են դեռես հինգ հարյուր տարի առաջ կոնկիստադորների կողմից բնիկների նվաճման եւ թուլլ տված ավերածությունների հարցերով, որպեսզի հասնեն այն բանին, որ Իսպանիան ներդրություն խնդրի ժամանակին իր գործած արարքների համար: Այսինքն՝ մեկ անգամ ես շեշտվում է անցյալի եւ ներկայի փոխկապակցվածությունը:

Լուսինե ՄԻԻԹՐԱՆ

• Մի աշխատիր արդարանալ: Դրանով միայն ծանրացնում ես հանցանքը:

• Ընդհակառակը, պետք է սովորել երբեք և ոչ մի բանի դեմ չտրտնալ, այլ դրա փոխարեն աշխատել ներդրության պատճառը մեջտեղից հեռացնել: Ծույլ ու անզոր մարդը ճանճի շիրիլու դեմ էլ է տրտնում, փոխանակ լռությամբ ձեռքը բարձրացնելու և նրան ըջելու:

Մի ժողովուրդ, որ մոտ հազար տարի ապրել է ստրկական կյանքով, չի կարող ծնել այնպիսի որդիք, որոնք ազատ մտածելու հետ միասին՝ կարողանային նաև ազատ գործել:

Ազատամտության գլխավոր հատկանիշն այն է, որ, նախ՝ ներողամիտ աչքով նայես ընկերոջ թերության ու սխալանքների վրա, երկրորդ՝ ցանկանաս, որ նա ևս վայելե այն բարիքները, ինչ-որ դու վայելում ես կամ կցանկանայիր վայելել, և երրորդ՝ որ նրան էլ իրավունք տաս խոսելու կամ գործելու այնպես, ինչպես որ դու ես խոսում կամ գործում: Բայց ձեզանից բանիսի մեջ կարելի է գտնել յասօրինակ ազատամտություն: Թուրքը մի առած ուրիշ, որ ասում է՝ «կաթի հետ մտածո՞՞ հոգու հետ դուրս կգա»: Այս ճշմարտության մեջ հանդիպում ենք ամեն քայլափոխում, թե ինչպես՝ բացատրեմ: Մեր խոսքն ու գործը, առհասարակ, չեն հարմարում իրար: Խոսքն առաջինական է, գործը՝ մոլեկան: Ներքող ենք կարողում ազատամտության և արդարության համար, բայց առանց խոճախարկվելու բռնական մեր մրցակցի վրա և կամ ընկերի իրավունքը հափշտակում: Դրվառում ենք գուրջ ու բարեգործությունը և, սակայն, առանց ամաչելու, հանում մեր եղբոր վերջին շապիկը, առաքելով թե՛ դա մեզ է պատկանում: Ինչո՞ւ է այս այսպես նրա համար, որ «կաթի հետ» միասին ստրկության, բռնության և անարդարության շատ սաղմեր են մտել մեր արյան մեջ, և նրանք միայն մեր «հոգու հետ պիտի դուրս գան»:

ՍՄՈՐԱՅԱԼ

140

դակցության ընթացքում հանդես եկավ ԶՆԴԿԻ-ի էթյուրքական պետությունների Իսլամական համագործակցության կազմակերպության և Թյուրքական պետությունների կազմակերպության ԽԿ-ի հետ պաշտոնական հարաբերությունների հաստատման դեմ, Լավրովից կեղծիքի հիմքի վրա նմանօրինակ հարձակումն անսպասելի չէր: Ռուս դիվանագետը, խոսելով 2022 թ. սեպտեմբերին տեղի ունեցած հարձակման մասին, չի նշում, որ դա կատարվել է Հայաստանի Հանրապետության դեմ, չի նշում նաեւ, թե ով է «բռնության բռնկում» իրականացրել: Այս արտահայտում է սովորական թվացող միտք, թե դրանից հետո «մենք ստացանք Երեւանի խնդրանքը»: Այսուհետեւ երկար-բարակ հեքիաթ է պատմում ԶՆԴԿ խաղաղապահ առաքելության տեղակայման մասին՝ շեշտելով, որ այդ ծրագիրը վաղուց էր պատրաստ: Այն, որ Հայաստանը պաշտոնապես դիմել է ինչպես Ռուսաստանի Դաշնությանը, որի հետ համապատասխան պայմանագիր ունի, այնպես էլ ԶՆԴԿ-ին, վկայում է, որ Երեւանն իրականացրել է այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են ստորագրված համաձայնագրերով: Դա ոչ թե խնդրանք էր, այլ պահանջ, եւ Մոսկվան ընդամենն ապացուցեց, որ վստահելի դաշնակից չէ: Խուսափելով այն փաստի հրապարակումից, որ Ադրբեջանը հարձակվել է ոչ թե Արցախի, այլ ինքնիշխան Հայաստանի Հանրապետության վրա, Ռուսաստանը ձգտում է արդարանալ, որ չի կատարել Հայաստանի հանդեպ իր դաշնակցային պարտավորությունները թե որպես առանձին պետություն եւ թե որպես ԶՆԴԿ ռազմաքաղաքական միավորման անդամ: Միեւնույն ժամանակ Լավրովը զարմանք է հայտնում, որ հայկական կողմն իրենց չի շտապեցրել խաղաղապահ առաքելություն տեղակայել Ադրբեջանի հետ սահմանին՝ անուղղակիորեն խոստովանելով, որ դա Երեւանին նետված մարտահրավեր էր եւ ոչ թե խաղաղության հաստատման փորձ: Այն, որ Ռուսաստանը եւ ԶՆԴԿ-ի անդամ մյուս պետությունները հրաժարվել են դատապարտել Ադրբեջանի գործողությունները, հենց այդ մասին է վկայում: Ավելին՝ դրանով իսկ նրանք հրաժարվել են գծել ԶՆԴԿ-ի պատասխանատվության գոտին, որը պետք է ընդգրկի անդամ պետությունների սահմանները: Լավրովն ավելի հեռուն է գնում՝ հայտարարելով, որ այդ հողերն Ադրբեջանին են: Այս կեղծիքին մենք կանդրադառնանք ներքեւում, հիմա պարզապես շեշտենք, որ իր միտքն ամրապնդելու համար նա ասում է, թե Հայաստանը, Ադրբեջանն ու Եվրամիությունը փաստաթուղթ են ստորագրել «խաղաղ պայմանագիր ստորագրելու պատրաստակամության մասին այն պայմաններով, որոնք նշված են 1991 թ. Ավան Աթայի հռչակագրով: Կրկնելով, ըստ էության, Ադրբեջանի այն պնդումը, որ այդ հռչակագրով «ընդունվում են հորհրդային Միության հանրապետությունների սահմանները՝ Լավրովը շեշտում է, թե որովհետեւ Լեռնային Ղարաբաղը ԽՍՀՄ-ում Ադրբեջանի կազմում էր, ուրեմն ադրբեջանական է: Փաստաթղթերի կամայական, կեղծ մեկնաբանությունները ընտրող են ինչպես ադրբեջանական, այնպես էլ ռուս գործիչներին, ովքեր, տարված գավթման մոլուցքով, պատրաստ են տրոբել ուրիշների օրինական հետաքրքրությունները եւ այլ լույսի ներքո ներկայացնել տեղի ունեցած իրադարձությունները: Ավան-Աթայի հռչակագիրը փաստում է ոչ թե խորհրդային հանրապետությունների սահմանների շարունակականության, այլեւ տարածքային ամբողջականության եւ տարածքների անբախտելիության մասին, իսկ դա միանգամայն այլ բան է: Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991 թ. օգոստոսի 30-ին ընդունել է «Ադրբեջանի պետական անկախության վերականգնման մասին» հռչակագիրը, իսկ նույն թվականի հոկտեմբերի 18-ին՝ նաեւ «Ադրբեջանի պետական անկախության վերականգնման մասին» սահմանադրական ակտը: Թե՛ հռչակագրով եւ թե՛ սահմանադրական ակտով Ադրբեջանը հայտարարել է, որ ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը հրաժարվում է հորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից եւ իրեն հայտարարում է 1918 թ. մայիսի 28-ին հռչակված եւ մինչեւ 1920 թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը: Իսկ Արցախը երբեք չի եղել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կազմում: Իսկ հիմա «պատմական հիշողությունը» մեզ ուղղորդում է դեպի անցած դարի սկիզբ, երբ Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանությունից հետո հայ ժողովրդի բերդներն իրենց մեջ ուժ գտան՝ կերտելու սեփական ինքնիշխանությունը պատմական հողերի մի մասի վրա եւ ենթարկվեցին ռուս-թուրք-ադրբեջանական դավադիր հարձակմանը: 1920 թ. հոկտեմբերին Երեւանում ստորագրվեց հայ-ռուսական համաձայնագիր, որով «Ռուսաստանի խորհրդային կառավարությունն ընդունում է, որ Հայաստանի հորհրդային Ընդհանրական Հանրապետության հողերի մեջ անվիճելի կերպով մտնում են Երեւանի նահանգը՝ իր բոլոր գավառներով, Կարսի

նահանգի մի մասը, որը զինվորական տեսակետից ապահովում է Երկաթուղու տիրապետությունը՝ Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակի նահանգի Չանգեզուր գավառը եւ Արագախ գավառի մի մասը օգոստոսի 10-ի համաձայնության սահմաններում եւ Թիֆլիս նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչեւ 1920 թ. սեպտ. 28-ը»: Հայաստանում խորհրդային իշխանության հռչակումից հետո հորհրդային Ադրբեջանի կառավարությունը նոյեմբերի 30-ին հանդես եկավ «Բուրին, բուրին, բուրինե կոչով, որում Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը եւ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Միրզա Հուսեյնովը հայտարարեցին Հայաստանի հետ տարածքային վեճերը դադարեցնելու եւ Լեռնային Ղարաբաղը, Չանգեզուրը եւ Նախիջեւանը Սովետական Հայաստանի բաղկացուցիչ մաս ճանաչելու մասին: Դեկտեմբերի 1-ին, երբ Հայաստանը դեռեւս խորհրդայնացած չէր, Երեւանում տեղի է ունենում խորհուրդների հանդիսավոր նիստը, որի ընթացքում Գ. Օրջոնիկիձեն խոսում է Արցախը, Չանգեզուրն ու Նախիջեւանը Հայաստանին թողնելու մասին: Ադրբեջանաբուլշեփկյան այս ներկայացումն ընդամենը նպատակ ուներ արագացնելու Հայաստանի խորհրդայնացումը՝ վստահեցնելով, որ Հայաստանը տարածքային կորուստներ չի ունենա: Եվ անհղկեմբերի 2-ին կնքվում է Հայաստանի խորհրդայնացման համաձայնագիրը, որով Հայաստանը հռչակվում է «խորհրդային սոցիալիստական հանրապետություն»: Շատ չանցած փոխվում է նաեւ Ադրբեջանի ղեկավարության դիրքորոշումը, եւ Մոսկվայի հետ դավադիր համաձայնության արդյունքում Արցախն ու Նախիջեւանը բռնակցվում են Ադրբեջանին ինքնավար հանրապետությունների կարգավիճակով: 1920 թ. դեկտեմբերին, երբ Հայաստանի Հանրապետությունը տեղի տվեց խորհրդայնացման ճնշմանը, Սյունիքը՝ Գարեգին Նժդեհի ղեկավարությամբ, մերժեց ընդունել խորհրդային իշխանությունը եւ հռչակեց իր անկախությունը: Հայերի համար Չանգեզուրի գոյամարտն ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրսևորում էր, որը մղվում էր երկրամասն Ադրբեջանի մաս դարձնելու՝ խորհրդային վտանգից պաշտպանելու համար: 1921 թ. հուլիսի կեսերին Սյունիքը հորհրդային Հայաստանին միացնելու երաշխիքներ ստանալուց հետո Գարեգին Նժդեհը փոքր զորախմբով անցավ Պարսկաստան, որով էլ ավարտվեց Լեռնահայաստանի կարճատև, բայց վառ ու հերոսական պատմությունը: Այսպիսով՝ թուրք-բուլշեփկյան դավադրության արդյունքում մայր Հայաստանից բռնի ուժով չափկվեցին միայն այն տարածքները, որոնք պայքարի դրոշ պարզեցին նվաճողների դեմ եւ փայլուն հաղթանակներով հաստատեցին ազատ, հայրենի երկրի կազմում ապրելու ու գործելու իրենց իրավունքը: Այս տեսանկյունից միանգամայն հասկանալի է, թե ինչու է ռուսական քարոզչամեթոդներ, սկսած դեռեւս 2016 թ. քառօրյա պատերազմի ժամանակներից, տարբեր առիթներով ու միջոցներով անընդհատ հարձակվում Գարեգին Նժդեհի վրա: 1920թ. դեկտեմբերի 2-ից մինչեւ 1922 թ. մարտի 12-ը (շուրջ 1 տարի 4 ամիս) Հայկական հորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը թե՛ւ ձեւականորեն, սակայն համարվում էր անկախ պետություն: Այս համատեքստում խորհրդային Ռուսաստանը որեւէ իրավունք չուներ Հայաստանի վերաբերյալ կնքել 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը, որով, ըստ էության, հայկական հողերը հանձնվեցին Թուրքիային ու Ադրբեջանին: Ընդ որում՝ հարկ է նշել, որ ոչ թե մակայական Թուրքիան, ոչ Ադրբեջանը, ոչ Ռուսաստանը միջազգային իրավունքի տրամաբաններ չէին, չէին ճանաչվել որեւէ պետության կողմից, իսկ նրանց կնքած պայմանագրերն ու այդ փաստով եւ այլ պետության տարածքները մասնատելու փաստով ի սկզբանե անաչին է: Գիտակցելով այդ փաստը՝ Ռուսաստանը եւ Թուրքիան Հայաստանին պարտադրում են Կարսի պայմանագիրը՝ իբրեւ թե՛ ինչ-որ կերպով դավադրության արդյունքում իրենց իրականացրած գավթումները լեգիտիմացնելու համար: Ալեքսանդրապոլի դաշնագիրը կնքման պահից իսկ առջինից է, հետեւաբար, մեզ համար որեւէ պարտավորություն չնախատեսող պայմանագրի փոխարեն ճիշտ կլինի գբաղվել Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի իրավա-քաղաքական վերանայումներով, որովհետեւ ի սկզբանե անվավեր այդ «փաստաթղթերն» այսօր փաստացի իրենց ազդեցությունն են ունենում Հայաստանի տարածքային եւ տնտեսական դրության վրա: Հատկապես վերջին 300 տարվա պատմության հիշողությունը վկայում է այն մասին, որ ռուսական դիվանագիտության թուրքահաճ տրամաբանությունը բացահայտ նույնն է եղել հայության համար ճակատագրական պահերին, եւ այդ պատմության նորով ուսումնասիրության կարելությունն այսօր թելադրված է ոչ միայն պատմական ճշտության պետական վերականգնման, այլեւ, Պոստիկի խոսքով ասած, «հարազատ հողի ընկալման» միջոցով ապագայի կերտման անհրաժեշտության վրա:

Իշխան ԲԻՇՄԻՐՅԱԼ



Չորավարի նորահայտ դիմանկարը

Վերջերս Մշակույթի հայկական ֆոնդում պատե-
հուբյուն ունեցա մասնակցելու «Ծիր-կաթին» գի-
տամշակութային կենտրոնի ցերեկույթին: Ուշա-
դրությունս գրավեց գրաստեղանին դրված մեր
պանծալի Չորավար Անդրանիկի շրջանակված
նկարը: Փոքրիշատե ծանոթ լինելով Անդրանիկ
Օզանյանի լուսանկարներին եւ գեղանկարիչների
ստեղծագործական պատկերումներին՝ սույն նկա-
րը, գու՛նե ինձ համար, պարզապես նորություն էր:
Եվ երբ նկարի դարձերեսին փակցված նամակն ըն-
թերցեցի, պարզվեց, որ այն Բուլղարիայից ֆոնդին
է ընծայել մեր հայրենակից Թորգոմ Տյուկերյանը:

Ահավասիկ նամակի բովանդակությունը՝ մաս-
նակի խմբագրական միջամտությամբ.
«Մշակույթի հայկական ֆոնդի ղեկավար, բա-
նաստեղծ, նկարիչ Արեւշատ Ավագյանին

Չորավար Անդրանիկի այս նկարը 1919 թվակա-
կին պատկերագրել է բուլղարացի գեղանկարիչ
Դմիտր Ռադոյկովը (1879-1940 թթ.): Ձեզ եմ
նվիրում յուղաներկ դիմանկարի գունավոր վերա-
տպությունը՝ ի նշան Հայրենիքի եւ Մշակույթի
հայկական ֆոնդի հանդեպ իմ մեծ սիրո: Դիմա-
նկարի բնօրինակը (օրիգինալը) ժամանակին
ձեռք է բերել Ռուսեի մեր հայրենակից Սկրտիչ
Հարությունյանը, որը Անդրանիկ Օզանյանի
ձիավոր հարյուրյակի հրամանատար Արամ
Թությանի թոռն է: Իմ Թորգոմ Տյուկերյանի նա-
խաձեռնությամբ եւ աջակցությամբ, նկարի սեփա-
կանատերը այն նվիրեց Չորավար Անդրանիկի
տուն-թանգարանին (Գալաթա, Վառնա):

Չորավար Անդրանիկի այս նկարը նույնպես թող
հավերժ հիշատակեցնե ու վառ պահե մեր քաջ հե-
րոսի անմահ հիշատակը եւ ներշնչանքի աղբյուր
դառնա ապագա սերունդներու համար:

**Սիրով՝ Թորգոմ Տյուկերյան
25.02.2019 թ., Վառնա, Բուլղարիա»:**

Փոքրիկ դիտարկում. ինձ ուրախացնում ու միա-
ժամանակ զարմացնում է այն իրողությունը, որ
բուլղար գեղանկարչին հաջողվել է ըմբոստ,
անհանգստ բնավորություն ունեցող Չորավա-
րին համոզել՝ նկարվելու համար ժամերով
կեցված ընդունել... Հարգանք ու պատիվ թե՛
գեղանկարչին, թե՛ երախտավորներ Սկրտիչ
Հարությունյանին եւ Թորգոմ Տյուկերյանին,
քանզի նրանց շնորհիվ մենք հարստացանք հայ
ժողովրդի սիրված զավակի եւ մեկ նկարով:
Իսկ նկարից արծվենի հայացքով մեզ է նայում
ժողովրդական հերոսը, հայրենյաց ու ազգի
պաշտպան մեր վաստակաբեռ, քաջամուտ զո-
րական այրը՝ գեներալ Անդրանիկը:

Սերժ ՍԱՆՈՒԿՅԱՆ

Մեկը գորավարի արձիվներից

*Աչքերիս առջև է նա՝ Անդրանիկի
զինվորը՝ թիկնեղ, վերձիգ, առնացի
ու համակրելի կեցվածքով այրը, որն
իրեն այնքա՛ն սագող զինվորական
համազգեստով, բուն անելիքը չգտնող
մարդու նման, տխուր ու մտախոհ դե-
գերում էր Աշտարակի փողոցներում՝
հայացքը՝ թափառ, միտքը՝ տարիների
հեռուն...*

Սակայն հպարտ ու երջանիկ էր նա,
քանզի սրտի մեջ Անդրանիկին ուներ...

Արեւմտահայ էր, Անդրանիկ Օզանյա-
նի հայրենակիցը՝ նույն Մեքաստիա
նահանգից: Միհրան Հովհաննեսի Չա-
քարյան: Տարաբախտ հայի ճակատա-
գրի կամոք՝ պիտի ապրեր անձկալի
հայրական օջախից հեռու՝ նրա այրող
կարոտանքով եւ վերադարձի մշտագո
հույսով: Ապրում էր այն հերոսական
օրերի հուշերով, երբ ինքը՝ ջահել զին-
վոր, երակներում ահագնացած ուժ ու
կորով, արդար վրեժով բորբոքուն՝ կռիվ
էր տալիս ամբարիշտ թուրքերի դեմ:

Պաշտելի գորավարի կողմից գորքը
ցրելուց հետո, շուրջ 60 տարի, մինչեւ
խոր ծերությունն ու մահ, քանի՛՜ ձեռք
զինվորական համազգեստ մաշեց.
ասել է թե՛ անվիատ, հավատով ու կան-
չի սպասումով իրեն միշտ շարքում՝
զինվոր գաց: Երբ արդեն ծանոթներ
էինք, միայն զինվորական հագուստ
կրելու մասին հետաքրքրությանս պա-
տասխանեց.


– Տղա՛ս, գիտե՞ս, Չորավարս ինչ
ըսած է մեռնելէ առաջ՝ «Մահս չեմ
հոգար, հեյ-վա՛խ, գործս կիսա՛տ
մնաց...»: Հասկըցա՞ր...

Առաջին անգամ նրան տեսել եմ
Աշտարակի զինկոմիսարիատում՝
60-ականների սկզբին: Այստեղ ելու-
մուտ անող բարձրաստիճան սպաների
մեջ հենց երեսաց ռազմական այր
հիմնարկության ամենահամեստ «պաշ-
տոնյան» պարետը, անուսադիր շինե-
լով ծերունազարդ Միհրանը, գորական
մարդու իր առնչքնող կեցվածքով վեհո-
րեն առանձնացավ մյուսներից: Հան-
դարտաբայլ, վսեմ խորոխությամբ
իջավ աստիճաններով, լուսեղեն մի
հայացք սփռեց շարք կանգնած զինա-
կոչիկներիս վրա, աչքերով սիրեց,
զուրգուրեց բոլորիս (ո՛վ գիտե՛ ինչե՛ր
անցան մտքով...): Այնպես ձգող էր թիկ-
նավետ զինվորականի նրա տեսքն ու
հմայիչ ծպիտը, որ պատրաստ էիք
նույն պահին զինավառվել եւ Միհրան
պապի հրամանատարությամբ մինչեւ
իսկ աշխարհի ծայրը գնալ...

Նա մեզ առավել ձգեց, երբ խոսքի
անազատության այն օրերում ոչ բարձ-
րաձայն ասացին, թե Անդրանիկի ար-
ժիվներից մեկն է եղել... Խաթարվել էր
նրա կյանքը: Ինչպիսի՞ նեղություններ
էր կրել Անդրանիկի, կամ, որ նույնն է,
հայրենիքի զինվորը լինելու համար.
բանտ, քարոտ, պարտադրված լուռ-
ություն, աղքատություն, նաե՛ւ պետա-
կան արհամարհանք: Հետո նոր ժա-
մանակներ եկան: Հավվեց լուրջության
սառույցը: 1965 թ. փետրվարի 25-ին,
Հայաստանի հայրենասեր ղեկավար
Յակով Չարոբյանի ջանքերով, առաջին
անգամ հանդիսավորությամբ նշվեց



Չորավարի ծննդյան 100-ամյակը: Ժո-
ղովուրդն, իհարկե, չէր մոռացել իր
հերոսին: Եվ, ահավասիկ, մեծ հայրու-
կապետը գնահատվում էր պետական
մակարդակով:



Տոն էր եւ հին զինվորի տասնամյակ-
ներ կաղապարված սրտում: Հոգին
լցվել էր երանությամբ, այն ինչպե՛ս էր
աշխուժացել խնդությունից ասես խեն-
թացել էր: Տնծահույզ բերկրումով աչ
ու ահյակ բաժանում էր կենսաթոշակի
ամբողջ գումարով գնած լրագրերի
հոբելյանական համարները: Նշխարի
պես տալիս էր ծանոթ-անծանոթներին,
հպարտ բարձրաձայնում.

– Աղբա՛րս, քույրի՛կս, վերցո՛ւր, կար-
դա՛, Չորավարիս մասին է՛ Անդրանիկի՛,
Անդրանիկ Չորավարիս...

Տարիների լուռությունից հետո լիահա-
զագ գոռալ էր ուզում, բոլորին հասցնել
էր ուզում իր սիրո, իր ցավի, իր հոգու
կալանված ճիչը՝ «Անդրանիկ» սուրբ
անունը...

1969 թ. աշնանը վրացահայ ընկերոջս
հետ եղանք Ուշանում: Մարդաշատ
էր գորավարի՝ գյուղացիների համառ
կամքով կանգնեցված արձանի մեր-
ձակայքը: Անդրանիկի մարտիկներից
մեկը՝ ճերմակահեր, բարետես արտա-
քննով հորեն Քոչարյանը, հայրենասեր
ուշանցիներին կապոցներով ընծա էր
բերել Սո. Կուրտիկյանի «Պրոլույան
հովտաշուշաններ» նոր լույս տեսած
գրքի 100 օրինակ: Երբ ասվեց, թե գրքում
Չորավարի մասին պատմվածքների
շարք կա, իրարանցում սկսվեց, եւ մեկ-
երկու ակնթաթթում մարդիկ միմյանց
ձեռքերից թոցրին բոլոր օրինակները:

160

Վանաձորում նշվեց մեծն զորավար Անդրանիկի ծննդյան օրը

Բարեգործն ինքնաբավ ժպտում էր. մեծն հայրուկապետի մասին մեզանում տպագրված առաջին գեղարվեստական խոսքը ժողովորդն այս ինչքան սրտալի ընդունեց, որքան անպարպելի սեր կա ժողովրդի երախտագետ սրտում...

Խորեն Զոչարյանին տեղեկացրի, որ հանգամանքների բերումով Աշտարակում է ապրում իրենց զինակիցներից մեկը: Ուրախացա՛մ, խնորեց օգնել՝ տեսակցես:

Այդ հանդիպումը... Սրանք նախ երկու քայլի վրա զգալի լռությամբ գնեցին միմյանց, ապա զորախմբերում իրենց տեղերը ճշտելուց հետո ուղիղ կես դար անց գտան, ավելի ճիշտ՝ վերագտան իրար: Ու հորդացին զգացմունքները: Պահ անց Միհրանը նկատեց զինակից ընկերոջ կրծքին ոսկու փայլով շողշողացող «Ֆրանսիայում կտրված» Անդրանիկի պատկերով մեդալը: Ալեկոծվեց: Ջլապիկո մատները սեր ու քնքշանք դարձրած՝ խանդավառանքով հայեց զորավարի դիմապատկերին: Զետո ծալվեցին հին զինվորի ծնկները, խոնարհվեց զորավարի մեդալի վրա ու դողդոջուն շրթունքներով, գոց աչքերով, համբուրեց, համբուրեց...

– Չորավարս, զորավարս, – շշուշում էր կամացուկ, սուրբ աղոթքի նման, մի տեսակ վերացած՝ վերահաս հոգեւալացումի մեջ:

Այսքա՛ն էլ սե՛ր... Եվ բացվեցին սրտի քարացած աչքերը... Ամեն ինչ շիտակ էր մարդկայնորեն, բնական, հոգեբուխ...

Խորեն Զոչարյանը ցավով, բայց եւ անթաքույց հպարտության շեշտով ասաց.

– Գիտե՛ս, Միհրան՝ եղբայր, Անդրանիկի զինվոր լինելու համար ամբողջ տասը տարի աքսոր եմ քշվել...

– Է՛հ, Խորեն, աղբա՛րս, քսան տարի ալ՝ ես...

Հանդիպումը, հիրավի, սրտաշարժ էր: Շրջապատողներս՝ ակամա հանդիսատեսներ, խորապես զգացվել էինք: Հազվադեպ պատեհություն. բեմ ու բեմականացում չէր, չկար ռեժիսոր-ռեժիսորա, մեր առջեւ իրական կյանքն էր, կյանքի դրաման՝ իրական գործող անձերով...

Վերջին անգամ Միհրան Չաքարյանին տեսա բարեկամիս լուսանկարչատանը: Անդրանիկի այժմ շատ հանդիպող, բնօրինակ մի լուսանկար էր բերել եւ խնդրում էր ֆոտոմոնտաժի եղանակով իր նկարը գեներալի «քովը դնել»:

– Խառը տարիներ էին, չկրցա Չորավարիս հետ առանձին նկարվել... Զանի կապրիմ, այս մեկ նկարն ալ գլխուս վերեւը կունենամ, երբ մեռնիմ, հարկավ, հոգիս Չորավարիս կերթա...

Զետո այլևս չտեսա ծերունագարդ զորակալին: Նրա մահն ու թաղումն էլ իր ապրած համեստ, անաղմուկ կյանքի պես աննկատ եղավ...

Հանկարծ զգացի, որ մեր քաղաքի փողոցներից ուրույն մի երանգ է պակասել: Ողորմի՛ք եզ, հին զինվոր: Երանի, թե ապրեիր, աչքովդ տեսնեիր ազգային մեր վերագարթոնքի, ֆիդայության վերածննդի քո փափագած օրերը եւ, մանավանդ, հայոց կանոնավոր բանակի գեներալ ուժը...

Իսկ զորավոր Չորավարդ, բոլորիս Չորավարը, վերադարձել, փարվել է հայոց սրբասուրբ հողին, մեր դուցազնական հողին, քո հողին...

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ



«ԻՆՏԵՐԿԱՊ» ԶԿ-ի «Չորավար ԱՆԴՐԱՆԻԿ» նախաձեռնող խումբը բոլորին փետրվարի 25-ին՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ ժ.13.30-ին հրավիրել էր միասին նշելու հայ եւ բուլղար ժողովուրդների Ազգային Զերոս Մեծն Չորավարի ծննդյան օրը: Զետաքրքիր էր, որ միջցաման ժամանակ հնչեց Կարո Վարդանյանի խոսքերով՝ Արամ Խաչատրյանի երաժշտությամբ գրված հիմնը, երաժշտական ձևավորումը երաժշտագետ, պրոֆեսոր՝ Սերգեյ Զարուբյունյանի: Այն կատարեցին Վանաձորի պետական համալսարանի ուսանողները:

Կարո ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Քո լեռներում հին դարերն են վարարել, Զորձանք տվել, քարացել են հավիտյան,

Դու քարից այդ քո վանքերն ես արարել, Քո վանքերը որպես աղոթք, Հայաստան:

ԿՐԿՆԵՐԳ
Ջահ ես միշտ վառ,
դու ապավեն հայության,
Օրինյալ լինեն որդիներդ միաբան,
Թող դարերում երգդ հնչի հաղթական,
Սուրբ անուդ
փառքով օծվի Հայաստան:
Մուրք հողվերն են
փորձել ճամփադ խոտորել,
Բայց անցել են,
փոշին դարձել պատմության,
Դու քո ջրին օտար ջրեր չես խառնել,
Ու պահել ես ոգին անեղծ հայկազյան:
Թնդաց կայծակ Արարատի գագաթից,
Եռագույնը կապեց հույսի ծիածան,
Ձերբազատվեց քո երկինքը ամպերից,
Լույսով լցվեց
փառքիդ ճամփան Հայաստան:

Այնուհետև ժ.15:00-ն «ՈՄԱ-Վանաձոր» ԶԿ-ի նախաձեռնությամբ «Լոռի» ժամանցի կենտրոնի դահլիճում մասնակիցները դիտել են «Անդրանիկը և Հայաստանի Հանրապետության ծնունդը» պատմամասնագրական ֆիլմը:

«ԻՆՏԵՐԿԱՊ» ԶԿ-ի նախագահ Նորայր Չուլոյանը կրկին շնորհակալություն է հայտնել նրանց, ովքեր իրենց նվիրատվություններով ու աշխատանքով նպաստել են Վանաձորում մեծն զորավարի պատվին կառուցված հուշարձանի կառուցմանը: «ԻՆՏԵՐԿԱՊ» ԶԿ-ն հաճախ է մշակութային միջցամաններ կազմակերպում, որոնք նվիրվում են հայ ազգային Զերոսների կյանքին ու գործունեությանը: Վերջերս էր, երբ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՈՆԶԻՎ» ծրագրով «Ինտերկապի» նախաձեռնությամբ Եվրոպայի հայ համայնքներում՝ այդ թվում՝ Նիդերլանդներում, տեղի ունեցան հանդիպումներ, որտեղ հաջողությամբ ներկայացվեցին ոչ միայն հայ ազգային գործիչների մասին պատումները, այլ նաև անվանի գրողների ստեղծագործությունները:

◆ Ամեն օր ձեր գլուխը բարձին դնելու ու քնելուց առաջ հիշեք, թե այդ օրը ի՛նչ եք արել ձեր ազգին համար:

◆ Ես իմ կյանքում երբեք չեմ ձգտել անձնական երջանկության ու բարօրության: Ես մշտապես ձգտել եմ միայն մի բանի և պայքարել եմ միայն մի բանի՝ իմ հարազատ ժողովրդի ազատության և բարեկեցության համար: Ես չեմ փնտրում իմ վաստակի գնահատականը և ցանկանում եմ միայն այն, որ երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ես ծառայում եմ ամբողջ կյանքում:

◆ Ամեն հայ, եթե միմիայն իր համար ապրելու մասին չմտածեր, մեր աղետների մեծ մասը պակաս կլիներ:

ԱՆԴՐԱՆԻԿ, հայ ժողովրդի Ազգային հերոս, ազգային-ազատագրական շարժման գործիչ, փառաբանված հայրուկապետ և զորավար:

80 ЛЕТ ПОДВИГУ ЛЕГЕНДАРНОГО КОМБАТА МАДОЯНА

14 февраля 1943 года около двух часов ночи в Ростов-на-Дону ворвались войска Южного фронта и, сломив сопротивление гитлеровцев, освободили город от фашистов. Об этом возвестила наступившая вдруг тишина...

Эта тишина была долгожданной, но в то же время внезапной и для Гукаса Мадояна. Собрав бойцов, которые еще могли держаться на ногах, он выдвинулся на соединение с войсками Южного фронта. Удивительно, что момент встречи командующего Южным фронтом генерал-полковника Р. Я. Малиновского и члена Военного совета Н. С. Хрущева со старшим лейтенантом Г. К. Мадояном удалось запечатлеть и увековечить на фотографии. Гордость и улыбка на лице командующего, серьезный взгляд Мадояна – радость и невероятное мужество на одном фото. Кто же он – этот Герой? Что пришлось ему выдержать и почему в момент общего ликования, когда никто не мог сдержать радость, он серьезен и без тени улыбки на лице?

Важному событию освобождения Ростова-на-Дону от немецко-фашистских захватчиков предшествовал беспрецедентный, шестидневный подвиг комбата Мадояна и его героического батальона, в составе которого были воины восемнадцати национальностей. Этот подвиг впоследствии был отмечен высшим званием Героя Советского Союза и медалью американской армии «За выдающиеся заслуги» от президента США Франклина Рузвельта. Мадоян стал одним из двадцати советских воинов, награжденных Рузвельтом во время Второй мировой войны. Вспоминают Мадояна с благодарностью и сегодня, одна из улиц Ростова-на-Дону названа в его честь. Город помнит и чтит память своих героев.

В ночь на 8 февраля 1943 года трем батальонам было поручено форсировать реку Дон и занять стратегически важный узел – железнодорожный вокзал Ростова-на-Дону. Нельзя было допустить, чтобы враг угнал к Таганрогу скопившие на путях эшелоны с военной техникой и снаряжением. А враг изо всех сил старался удержать «Ворота Кавказа».

Форсировавшие Дон красноармейцы столкнулись с огнем превосходящих сил противника. Командиры двух батальонов были ранены. Многие бойцы погибли. И, казалось, что операция обречена на провал... Но старший лейтенант Гукас Мадоян принял командование на себя и, собрав уцелевших бойцов, сумел изгнать фашистов из вокзала и занять его. Практически без отдыха, без медикаментов, при нехватке оружия и еды 6 дней бился Мадоян со своими солдатами с гитлеровцами. Они отбили 43 атаки. Не хватало оружия и приходилось отнимать его у немцев. Гражданское население Ростова-на-Дону оказывало поддержку своим освободителям всем, чем могло. От совсем юных и до пожилых – каждый делал все, что мог. Делились скудными запасами



сухарей. А мальчишки, пробиваясь сквозь позиции фашистов им одним известными путями, приносили эти сухари бойцам. Воины же отдавали еду раненым. Некоторые из ростовских девушек стали медсестрами, ухаживали за ранеными и в дальнейшем последовали с батальоном по его боевому пути.

Только за одни сутки, 10 февраля, гитлеровцы предприняли 20 атак, пытаясь вернуть контроль над вокзалом. По вокзалу били артиллерийские орудия и танки. Отчаявшись, на рассвете 11 февраля фашисты подожгли здания привокзальной площади с помощью авиабомб. Начался пожар. Горел уголь, который был складирован на площади. Это были самые трудные дни. С помощью ростовчанина машиниста Хижняка бойцы переместились в литейный цех паровозоремонтного завода. А немецкая авиация бомбила уже пустой вокзал. Мадоян со своими бойцами продолжал держать под обстрелом территорию вокзала. И немцы не смогли воспользоваться железной дорогой. Бойцы погибали, погиб и машинист Хижняк. Но гитлеровцы не смогли сломить сопротивление воинов. Фашисты предъявили ультиматум: если красноармейцы не сдадутся в течение двух часов, то будут уничтожены. 13 февраля фашисты открыли шквальный минометный огонь. Это была подготовка к решающей атаке. Большое количество гитлеровцев с двух сторон устремились к сталелитейному цеху. По сигналу Мадояна раздался залп, затем очередь ручного пулемета. Фашистов было слишком много. И Мадоян отдал приказ подняться в штыковую атаку. Воины бились изо всех сил. Никто не знал, что эта 43-я атака станет последней. Вечером 13 февраля Мадоян со своими бойцами вернул здание вокзала и закрепился там.

А потом стало тихо... И Мадоян со своими бойцами двинулся на соединение с

основными силами 51-й армии Южного фронта. Историческая встреча произошла на перекрестке улицы Энгельса и проспекта Буденновского. Командующий 28-й армией генерал-лейтенант В. Ф. Герасименко обнял Мадояна, поблагодарил и представил его генералу Р. Я. Малиновскому.



Героическая оборона ростовского вокзала была уникальна и вошла в историю. Без поддержки основных сил шесть дней удерживать вокзал, да еще нанести большой урон противнику – это невероятно! Фашисты потеряли 300 человек, 35 автомобилей, 10 мотоциклов, один танк. А 89 паровозов и свыше 3000 вагонов с различными грузами, в том числе оружием и боеприпасами, оказались в руках красноармейцев.

Подвигу комбата Мадояна и его батальона посвящена замечательная доку-

218

ментальная повесть Михаила Андриасова «Шесть дней». По мере обнаружения новых фактов автор дополнял эту повесть, бережно сохраняя для потомков каждый исторический факт.

История подвига Гукаса Мадояна достойна экранизации. Невозможно представить себе, что пережило героическое поколение, победившее фашизм. Встают перед глазами сцены подвига батальона Мадояна. Вот замерзший Дон. Ветер в спину. Бойцы окунают обувь в прорубь. Распахивают полы плащ-палаток, а ветер несет их на замерзшей обуви, как на коньках, по льду реки... А что же дальше? Ведь потом они сражались в этой замерзшей обуви... Вот другая сцена: горит привокзальная площадь, и нужно перейти через нее. Бойцы наливают воду на сапоги и переходят через горящий уголь...

А как же было, когда на второй день закончились запасы еды? Где находили они силы, чтоб сражаться без сна и отдыха?

Подвиг не приходит из ниоткуда. Жизнь выковала этих людей такими. Они прошли через немалые трудности и, преодолев их, обрели мужество и силу. Гукас Мадоян родился в Западной Армении, в селе Керс Карсской области, в 1906 году... Геноцид, потеря близких, скитания, одиночество... Сколько раз смотрел в глаза вечности этот мужественный человек? Какие силы хранили его и вели к героизму? Накануне прорыва батальона Мадояна в Ростове-на-Дону случилось чудо... Во время налета вражеской авиации Мадояна подняло волной от взрыва полутонной бомбы в воздух и отбросило... А он отделался легкими ранениями и даже улыбался. Подобное было с ним и в Гражданскую войну, когда рядом разорвался снаряд.

Мадоян получил тяжелое ранение позже, в боях за освобождение Польши, под городом Дембица. В 1944 году он окончил Военную академию имени М. В. Фрунзе и был уволен в отставку по болезни в звании подполковника.

Жил и работал в Ереване. Приезжал в Ростов-на-Дону, почетным гражданином которого являлся.

Необходимо помнить о таких героях. Но долг перед ними ничем не оплатить... Хочется верить, что когда-нибудь благодарные потомки снимут художественный фильм о легендарном комбате Гукасе Мадояне.

Слава героям всех времен!
Слава! Слава! Слава!

Нелли МКРТУМЯН.

АРЦАХСКОМУ ДВИЖЕНИЮ 35 ЛЕТ



В Гадрутском культурно-образовательном молодежном центре «Дизак Арт» Еревана открылась документальная фотовыставка, приуроченная к 35-летию Арцахского (Карабахского) освободительного движения. В экспозицию включено около 30 работ, сделанных в Гадруте, Степанакерте, Ереване и отражающих этапы движения.



